«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հաստատված է «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի
Խորհրդի կողմից
(Արձանագրություն թիվ 05/20 առ 28/04/2014թ.)

Խորհրդի նախագահ՝ ..... է. Սուքիասյան

ԳՈՒՅՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Երևան 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
ԲԱԺԻՆ 2. ԿԻՐԱՌՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 3
ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ 4
ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ 4
ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ 6
ԲԱԺԻՆ 6. ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ 13
ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՊԱԿԻՆԵՐԻ, ՀԱՅԵԼԻՆԵՐԻ ԵՎ ՑՈՒՑԱՓԵՂԿԵՐԻ ԿՈՏՐՈՒՄԻՑ .. 13
ԲԱԺԻՆ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՂՂԱԿԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎՆԱՍԻՑ 14
ԲԱԺԻՆ 9. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԻ ԱՂԴԵՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ 15
ԲԱԺԻՆ 10. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ 15
ԲԱԺԻՆ 11. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ 16
ԲԱԺԻՆ 12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ 18
ԲԱԺԻՆ 13. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ 20
ԲԱԺԻՆ 14. ԿՐԿՆԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ 20
ԲԱԺԻՆ 15. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ 21
ԲԱԺԻՆ 16. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ 21
ԲԱԺԻՆ 17. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ 22
ԲԱԺԻՆ 18. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ 23
ԲԱԺԻՆ 19. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ 24
ԲԱԺԻՆ 20. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ 24
ԲԱԺԻՆ 21. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 25
ԲԱԺԻՆ 22. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 27
ԲԱԺԻՆ 23. ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 28
ԲԱԺԻՆ 24. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ 30
ԲԱԺԻՆ 25.ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ, ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ 32
ԲԱԺԻՆ 26. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՅԼ ԱՆՁԻՆ ՓՈԽԱՆՑԵԼԸ 32
ԲԱԺԻՆ 27. ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ 33
ԲԱԺԻՆ 28. ԾԱՆՈՒՑՈՒՄ 33
ԲԱԺԻՆ 29. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ) 33
ԲԱԺԻՆ 30. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ 33

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն Պայմանները մշակված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի և այլ իրավական ակտերի դրույթներին համապատասխան և հանդիսանում են ապահովագրության վկայագրի անբաժանելի մասը:

1.2. Ապահովագրության սույն տեսակը համապատասխանում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի Հոդված 7 կետի (Ապահովագրության տեսակները և դասերը) 2-րդ տեսակի (ոչ կյանքի ապահովագրության) 8-րդ և 9-րդ դասերին (հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն և գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն):

1.3. Ապահովագրության պայմանագրով (այսուհետ՝ Վկայագիր) Ապահովագրողը պարտավորվում է Վկայագրում սահմանված վճարի (այսուհետ՝ ապահովագրավճար) դիմաց Վկայագրով նախատեսված դեպքի (այսուհետ՝ ապահովագրական պատահար) ի հայտ գալու պարագայում հատուցել Ապահովադրին կամ այն անձին, ում օգտին կնքվել է Վկայագիրը (այսուհետ՝ Շահառու) ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված վնասը (ապահովագրական հատուցում) Պայմանագրում սահմանված գումարի (ապահովագրական գումար) շրջանակներում:

1.4. Սույն Պայմանների (այսուհետ ՝ Պայմաններ) համաձայն կնքված Վկայագրերը գործում են ՀՀ և ԼՂՀ տարածքներում, եթե Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

1.5. Պայմանները կցվում են Վկայագրին՝ հանդիսանալով դրա անբաժանելի մասը և պարտադիր են Ապահովագրողի և Ապահովադրի համար (այսուհետ՝ Վկայագրի կողմեր):

1.6. Վկայագրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են Վկայագրում նախատեսել Պայմանների առանձին դրույթների փոփոխում, չկիրառում կամ այլ դրույթներ, որոնք չեն հակասում օրենքին և այլ իրավական ակտերին:

2. ԿԻՐԱՌՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ապահովագրող՝ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ Ապահովագրող կամ Ընկերություն):

Ապահովադիր՝ Ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքած օրենքով նախատեսված ցանկացած կազմակերպաիրավական ձևի իրավաբանական անձ, օտարերկրյա կազմակերպություն, գործունակ ֆիզիկական անձ, օտարերկրյա քաղաքացիներ և քաղաքացիություն չունեցող անձիք:

Շահառու՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող անձ: Գրավադրված գույքի ապահովագրության դեպքում Վկայագրում նշված գրավառու հանդիսացող Շահառուն առաջնահերթության կարգով իրավունք ունի ստանալու հատուցում՝ վճարման օրվա դրությամբ գրավով ապահովված պարտավորության գումարի սահմաններում: Հատուցման մնացած մասը վճարվում է Ապահովադրին կամ այլ Շահառուին, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր՝ Ապահովագրողի և Ապահովադրի միջև գրավոր համաձայնություն, որի գործողության ընթացքում Ապահովագրողը պարտավոր է ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում (բացառությամբ՝ սույն Պայմաններում նախատեսված բացառությունների) ապահովագրական գումարի սահմաններում հատուցում վճարել Ապահովադրին (կամ Շահառուին), իսկ Ապահովադիրը պարտավոր է վճարել Վկայագրում սահմանված ապահովագրավճարը նշված չափով, կարգով և ժամկետներում:

Ապահովագրական ռիսկ՝ ապահովագրման ենթակա հնարավոր պատահար, որը կարող է տեղի ունենալ պայմանագրի գործողության ընթացքում, որը կրում է հանկարծակի և պատահական բնույթ:

Ապահովագրական պատահար՝ պատահար, որի ի հայտ գալու դեպքում (բացառությամբ սույն Պայմաններում նախատեսված դեպքերի) Ապահովագրողը պարտավորվում է Ապահովադրին կամ Շահառուին վճարել ապահովագրական հատուցում սույն պայմաններում և Վկայագրում նշված կարգով:

Ապահովագրական հատուցում (այսուհետ՝ Հատուցում) ապահովագրական պատահար տեղի ունենալու արդյունքում Ընկերության կողմից Վկայագրի հիման վրա Ապահովադրին կամ Շահառուին վճարման ենթակա գումար՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով:

Ապահովագրական գումար՝ Վկայագրի գործողության ժամանակահատվածի ընթացքում ապահովագրության պայմանագրով նախատեսված Ապահովագրողի պատասխանատվության առավելագույն չափ:

Ապահովագրական արժեք՝ Վկայագրի կնքման պահին գույքի շուկայական արժեք:

Ապահովագրավճար՝ Վկայագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար:

Չհատուցվող գումար՝ վնասի չափ, որը չի հատուցվում Ապահովագրողի կողմից և որը սահմանվում է ապահովագրության պայմանագրով՝ կոնկրետ գումարի կամ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ:
Անվտանգության համակարգ՝ անվտանգության ապահովման ցանկացած համակարգեր և միջոցներ՝

- Հակահրդեհային, այդ թվում՝ հրդեհաշիջման և հրդեհի ազդանշանման ինքնաշխատ կայանքներ, հրդեհի տագնապի ազդարարման, փոխանցման և նմանատիպ այլ համակարգեր, հիդրանտներ, կրակմարիչներ, կրակի ծածկույթի միջոցներ (ցնցուղներ), հակահրդեհային վահանակներ և նմանատիպ այլ միջոցներ և սարքեր:
- Հակակողոպուտային, այդ թվում՝ շարժման և կոտրանքը հայտնաբերող տվիչներ, հակակողոպուտային դարպասներ, պիտակներ, տեսահսկման, փաստագրման և նմանատիպ այլ միջոցներ և սարքեր:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

3.1. ՀՀ օրենսդրության համաձայն և սույն Պայմանների հիման վրա «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական ՓԲԸ-ն գործունակ ֆիզիկական անձանց՝ ՀՀ քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, իրավաբանական անձանց (այսուհետ՝ Ապահովադիր) հետ կնքում է Վկայագրեր:
3.2. Վկայագիրը կնքվում է հօգուտ գույքի սեփականատիրոջ կամ հօգուտ այլ անձի, ով ՀՀ օրենսդրության, այլ իրավական ակտի կամ պայմանագրի հիման վրա այդ գույքի պահպանման շահ ունի (այսուհետ՝ Շահառու):

4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ

4.1. Ապահովագրության օբյեկտներ են հանդիսանում Ապահովադրի (Շահառուի) գույքային շահերը՝ կապված գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման հետ (գույքի ապահովագրություն):
4.2. Վկայագրով կարող են ապահովագրվել՝
4.2.1. **Անշարժ գույք**՝
ա) շենքեր, կառույցներ, բնակարաններ, բնակարանային կառույցներ, առանձնատներ, սենյակներ, ավտոտնակներ և օժանդակ շինություններ, բազմաբնակարանային շենքում ընդհանուր օգտագործման տարածքներ, կառույցներ և/կամ դրանց առանձին կառուցվածքային մասեր, շինարարության (այդ թվում՝ վերանորոգման) համար նախատեսված շինարարական և հարդարման նյութեր,
բ) լանդշաֆտային կառույցներ, ցանկապատումներ, հողակտորի ինժեներային սարքավորումներ, համակարգեր,
գ) անավարտ շինարարության անշարժ գույքի օբյեկտներ (շինությունների համար պարտադիր է հիմքի, պատերի, տանիքի, դռների և փակ պատուհանների առկայությունը, եթե շինարարական նախագծով նախատեսված է վերջիններիս առկայությունը),
4.2.1.1. **Անշարժ գույքի ներքին հարդարանք**՝
- ներքին հարդարանք (վերանորոգում)՝ նյութեր և աշխատանքներ, այն է՝ պատերի, հատակի և առաստաղի ծածկույթներ և հարդարում (սալիկապատում, լամինատ, գիպսոկարտոն, մանրահատակ, շրիշակներ, դեկորատիվ և այլ ներքին պանելներ, մանրաքար, ձգվող և այլ տիպի առաստաղներ և այլն), ներկարարական և սվաղային նյութեր, նրբաքանդակներ, պաստառներ և այլ նյութեր, դռների և պատուհանների դյուրավառ կոնստրուկցիաներ, ներառյալ ապակիները,
- ներքին ջրի, գազի և կոյուղային խողովակային համակարգ, միացման համար նախատեսված դետալներ և մասեր, էլեկտրահաղորդալարեր, հեռուստատեսային, հեռախոսային և այլ ներքին լարեր և մալուխներ: Սույն կետով ենթակա չէ ապահովագրության անշարժ գույքը (շենք, շինություն, կառույց, տարածք) որպես այդպիսին, ներառյալ՝ ներկառուցված կահույքը, ջեռուցման, սառեցնող, օդափոխող և ցանկացած այլ տիպի սարքերը, սարքավորումները, այլ գույք և ունեցվածք:
4.2.2. **Հումք և նյութեր**՝ պատրաստի արտադրանք, ապրանքներ, պահեստամասեր, հումքային նյութեր, կիսաֆաբրիկատներ, վառելիք:
4.2.3. **Սարքավորումներ և մեքենաներ**՝ սարքավորումներ, այդ թվում՝ էլեկտրական, հաստոցներ, սարքեր, համակարգիչներ, օդորակիչներ, լսա-տեսային (աուդիո-վիդեո) սարքավորում, ռադիո, ֆոտո և կինո սարքավորում, գրասենյակային այլ կազմտեխնիկա, կապի միջոցներ, հեռահաղորդակցման սարքավորումներ և հեռահաղորդակցումը ապահովող ենթակառուցվածքային տարրեր:
4.2.4. **Տրանսպորտային միջոցներ և այլ տեսակի շարժական գույք,** որը չի օգտագործվում որպես տրանսպորտ:
4.2.5. **Կենցաղային գույք և տեխնիկա**՝

ա) կահույք և գույք, տնային և այլ ունեցվածք, կենցաղային էլեկտրատեխնիկա, գործիքներ, կենցաղային և անձնական օգտագործման առարկաներ և իրեր, ինչպես նաև օժանդակ տնտեսության առարկաներ, անձնական օգտագործման գույք և այլ կարգի ունեցվածք,
բ) մանր տնտեսական, այգեգործական, սպորտային գույք, կենցաղային, մշակութային և այլ պահանջմունքներ բավարարելու համար նախատեսված այլ գույք:
4.2.6. **Հողատարածքներ:**
4.2.7. **Այլ գույք:**
4.3. Այն դեպքում, երբ ապահովագրված գույքի յուրաքանչյուր միավորն առանձին չի նշվում Վկայագրում, այլ նշվում են միայն գույքի խմբերը, որոնք առանձնացվում են դասակարգման հատկանիշներով (մեքենաներ և սարքավորումներ, ապրանքներ և պաշարներ և այլն), ապա ապահովագրված գույք ասելով հասկանում ենք բոլոր այն առարկաները, որոնք գտնվում են ապահովագրության տարածքում և հանդիսանում են գույքի այդպիսի խմբերի մի մասը, ներառյալ այնպիսիք, որոնք գոյություն են ունեցել Վկայագրի կնքման պահին և այնպիսիք, որոնք ավելացվել են այդ խմբին, այդ թվում՝ երրորդ անձանց գույքը, որը պահպանության, շահագործման, վերանորոգման կամ այլ նպատակներով փոխանցվել է Ապահովադրին, եթե այն ապահովագրված չէ այլ Վկայագրով: Բոլոր դեպքերում ապահովագրական հայցի դեպքում Ապահովադիրը պարտավոր է ապացուցել, որ նշված գույքը առկա է եղել ապահովագրության տարածքում Վկայագրի գործողության ընթացքում և պարտավոր է ներկայացնել այդ խմբի մեջ մտնող յուրաքանչյուր գույքի/իրի արժեքը, իր շահը այդ գույքի նկատմամբ, այդ գույքի առկա լինելը մինչև Վկայագրի ուժի մեջ մտնելը, և այդ գույքի ընդհանուր արժեքը պետք է համապատասխանի ապահովագրական գումարին:
4.4. Եթե ապահովագրված է համարվում Ապահովադրի պատասխանատվության տակ գտնվող պահպանության, վերանորոգման և այլնի համար փոխանցված գույքը, ապա այն համարվում է ապահովագրված դրա սեփականատիրոջ օգտին, եթե Վկայագրով այլ բան նախատեսված չէ:
4.5. Եթե այլ բան նախատեսված չէ Վկայագրով, ապա ապահովագրության ենթակա չէ հետևյալ գույքը՝
ա) կանխիկ փող,
բ) արժեթղթեր, ակցիզային ապրանքանիշեր,
գ) ազնիվ մետաղներ և թանկարժեք քարեր, դրանցից պատրաստված իրեր և առարկաներ, ինչպես նաև ոսկերչական իրեր,
դ) նամականիշեր, կոպեկներ, մեդալներ, դրամական նշաններ, նկարներ, քանդակներ և այլ հավաքածուներ կամ առարկաներ, որոնք հանդիսանում են արվեստի ստեղծագործություններ, հնաոճ իրեր,
ե) բանկային քարտեր և էքսպրես-վճարման քարտեր,
զ) թղթային կամ էլեկտրոնային կրիչների վրա գտնվող ձեռագրեր, նախագծեր և այլ փաստաթղթեր (փաստաթղթայնացված ինֆորմացիա),
է) մոդելներ, մակետներ, նմուշներ, ձևեր և այլն,
ը) կինո-ֆոտո-աուդիո նյութեր, այդ թվում՝ արխիվային նյութեր,
թ) տվյալներ տեխնիկական կրիչների վրա, կառավարման էլեկտրոնային համակարգեր և համակարգչային ծրագրեր,
ժ) պահածոյացված (երկար ժամանակ չօգտագործվող) արտադրական սարքավորումներ,
ի) ջրային ռեսուրսներ, ընդերքից չհանված օգտակար հանածոներ,
լ) բույսեր, կենդանիներ, միկրոօրգանիզմներ,
խ) օֆշորային կառույցների վրա (բաց ծովում և մայրցամաքային շելֆի սահմաններում գտնվող գույք, այդ թվում՝ փարոսներ, նավթային հենահարթակներ և այլն),
ծ) պայթուցիկ նյութեր և զինամթերք,
կ) աղբանոցներ,
հ) ռադիոակտիվ վառելիք օգտագործող սարքավորումներ,
ձ) պետական իրավասու մարմինների կողմից վթարային վիճակում ճանաչված շենք և շինություն, ինչպես նաև այդպիսի շենքում (շինությունում) գտնվող այլ գույք և ունեցվածք,
ղ) համապատասխան լիազորված մարմնի կողմից որպես սողանքի, փլուզման կամ այլ տարերային աղետի գոտի սահմանված տարածքում գտնվող ցանկացած գույք,
ճ) բացօթյա տարածքում տեղակայված շարժական գույք՝ բացառությամբ այն գույքի, սարքերի, սարքավորումների և համակարգերի, որոնք նախատեսված են շինությունից դուրս (բացօթյա տարածքում) օգտագործելու/շահագործելու համար (եթե այլ բան նախատեսված չէ Վկայագրով),
մ) տարբեր նյութերով աղտոտված կամ բերքատու շերտի բացակայությամբ հողատարածքներ:
4.6. Տրանսպորտային միջոցները հանդիսանում են ապահովագրված միայն հսկվող ցանկապատված տարածքում կամ փակ տարածքում գտնվելու ժամանակ և միայն եթե այդպիսի ապահովագրությունը հատուկ նախատեսված է Վկայագրով:
4.7. Ցանկացած տեսակի գույք, առարկա, պարագա, միջոց, որի պահպանումն ու շրջանառությունը համաձայն ՀՀ գործող օրենսդրության արգելված կամ սահմանափակված է:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ

5.1 Սույն Պայմանների համաձայն ապահովագրական ռիսկ է հանդիսանում ենթադրվող իրադարձությունը, որի տեղի ունենալու դեպքի համար կնքվում է Վկայագիրը:

5.2 Ապահովագրական պատահար է հանդիսանում տեղի ունեցած իրադարձությունը, որը նախատեսված է Վկայագրով և որի տեղի ունենալու արդյունքում առաջանում է Ապահովագրողի՝ Ապահովադրին (Շահառուին) ապահովագրական հատուցում իրականացնելու պարտականությունը: Եթե տվյալ իրադարձությունն առաջացել է հաջորդական դեպքերի արդյունքում և դրա սկզբնական և գլխավոր պատճառ հանդիսացող դեպքն ապահովագրված է եղել Վկայագրով, ապա տվյալ իրադարձությունը ճանաչվում է ապահովագրական պատահար՝ անկախ մնացած դեպքերի ապահովագրված լինելու հանգամանքից:

5.3 Սույն Պայմանների համաձայն՝ ապահովագրական դեպք է հանդիսանում իրական վնասը, որը հասցվել է Ապահովադրի գույքային շահերին՝ ապահովագրության օբյեկտի վնասմամբ և/կամ լրիվ կորստի ձևով, ինչպես նաև այն ծախսերը, որոնք Ապահովադիրը կրել է կամ պետք է կրի ապահովագրական պատահարի հետևանքների վերացման կամ կանխման համար և որոնք տեղի են ունեցել հետևյալ սահմանված ապահովագրական ռիսկերի (ռիսկային խմբերի) կամ դրանց համակցությունների ուղղակի ազդեցության արդյունքում՝

5.3.1. Հրդեհ, կայծակի ազդեցություն, պայթյուն,

5.3.2. Ջրի վնաս,

5.3.3. Բնական աղետներ,

5.3.4. Մեխանիկական ազդեցություն,

5.3.5. Ապակիների կոտրանք,

5.3.6. Այլ անձանց հակաօրինական գործողություններ,

5.3.7. էլեկտրական հոսանքի ազդեցություն,

5.3.8. Ուղղակի ֆիզիկական վնաս:

Ապահովագրության պայմանագիր կարող է կնքվել ինչպես վերը նշված յուրաքանչյուր ռիսկի գծով առանձին, այնպես էլ նրանց ցանկացած համակցության կամ կոմբինացիայի համար:

5.4. ՀՐԴԵՀ, ԿԱՅԾԱԿԻ ՀԱՐՎԱԾ, ՊԱՅԹՅՈՒՆ

Սույն կետով ենթակա է հատուցման ապահովագրված գույքի վնասը և/կամ կորուստը, որը հրդեհի հետևանք է.

5.4.1. **ՀՐԴԵՀ՝** Ապահովագրված գույքի վրա կրակի, վառվող նյութերի, տաք գազերի, հրդեհի ընթացքում բարձր ջերմաստիճանի ազդեցության հետևանքով առաջացած վնասներ, ինչպես նաև ապահովագրված գույքի վրա հրդեհի մարման և կանխարգելման նպատակով օգտագործված ջրի (փրփուրի, փոշու), հրդեհի հետևանքներից (ծուխ, մուր և այլն) և այլ միջոցների ազդեցության հետևանքով առաջացած վնասները:

5.4.2.Հատուցման ենթակա է նաև ապահովագրված գույքի վնասը կամ կորուստը, որն առաջացել է հրդեհը հանգցնելու արդյունքում ջրի կամ փրփուրի ազդեցության հետևանքով:

5.4.3 Սույն Պայմանների շրջանակներում հրդեհ ասելով՝ պետք է հասկանալ կրակի վառման և պահպանման հատուկ վայրերից դուրս առաջացած անվերահսկելի այրումը, այդ թվում նաև դիտավորյալ այրումը, որն ունակ է ինքնուրույն տարածվելու և նյութական վնաս հասցնելու:

5.4.4. Հրդեհից ապահովագրության դեպքում Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չեն՝

- վնասը, որն առաջացել է ապահովագրված գույքը կրակի կամ բարձր ջերմաստիճանի միջոցով մշակելու կամ վերամշակելու կամ այլ (օրինակ՝ արդուկում, չորացում, եփում, տապակում, ջերմային մշակում կամ մետաղների հալեցում) կրակով, ջերմությամբ մշակելու կամ այլ ջերմային ազդեցության ենթարկելու հետևանքով՝ դրա հատկությունները փոխելու նպատակով,
- ապահովագրված սարքավորմանը, սարքերին, տեխնիկային հասցված վնասը, որն առաջացել է էլեկտրական հոսանքի կարճ միացման հետևանքով, էլեկտրացանցում բեռնվածության, էլեկտրական հոսանքի լարման անկման կամ բարձրացման, էլեկտրական ինդուկցիայի, թափառող ալիքների կամ մագնիսականության ազդեցության արդյունքում կամ ուղեկցվել է կայծերով կամ տաքությամբ և/կամ կայծակի հարվածի պատճառով (եթե դրա հետևանքով հրդեհ չի բռնկվել), բացառությամբ բաց կրակի ծագման դեպքերի: էլեկտրական սարքավորումեր ասելով՝ այսուհետ հասկացվում է ցանկացած օբյեկտ, որում իրականացվում է էլեկտրաէներգիայի արտադրություն, բաշխում, փոխանակում կամ սպառում (այդ թվում՝ էլեկտրական մալուխներ և լարեր),
- եթե հրդեհը տեղի է ունեցել հակահրդեհային ազդանշանային և/կամ հրդեհը մարելու համար նախատեսված համակարգերի անջատված կամ անսարք վիճակում գտնվելու ժամանակ, սակայն միայն եթե այդ համակարգերի առկայությունը նշված է Վկայագրում,
- գույքի վնաս և/կամ կորուստ, որն առաջացել է ապահովագրության տարածքում պահվող և/կամ պահեստավորված պայթուցիկ, դյուրավառ կամ պայթունավտանգ նյութերի հրդեհի հետևանքով (եթե

այլ բան նախատեսված չէ Վկայագրով) կամ ապահովագրության տարածքում քիմիական և/կամ ֆիզիկական փորձերի իրականացման հետևանքով:

5.5. ԿԱՅԾԱԿ՝ կայծակից առաջացած էլեկտրական պարպման (կայծակի հարված) ազդեցության հետևանքով ապահովագրված գույքին պատճառված վնասները: Սույն Պայմանների շրջանակներում կայծակի հարված ասելով՝ հասկանում ենք ամպրոպից առաջացած էլեկտրական լիցք, որի դեպքում էլեկտրականությունը ջերմային, մեխանիկական և էլեկտրական ազդեցություն է թողնում ապահովագրված գույքի վրա:

5.5.1. Ապահովագրված գույքին հասցված վնասը և/կամ կորուստը, որն առաջացել է կայծակի ազդեցությունից առաջացած գերլարվածության հետևանքով, կարող է ապահովագրվել Կողմերի հատուկ համաձայնությամբ:

Սույն պայմաններով հատուցման ենթակա չեն՝

- էլեկտրաէներգիայի (էլեկտրամագնիսական իմպուլսի) փոխանցման հետևանքով էլեկտրալարերի կայծակնահարությունը,
- էլեկտրական սարքերին հասցված վնասները, որոնք հետևանք են՝ էլեկտրաէներգիայի ազդեցության կամ լրացուցիչ բեռնվածքի կամ մթնոլորտային պայմանների ուժի արդյունքում ջերմային ներգործության, այնպիսիք, ինչպիսիք են ստատիկ էլեկտրականությունը, մթնոլորտային լիցքաթափման և այլ համանման երևույթների արդյունքում առաջացած ինդուկցիան:

5.6. ՊԱՅԹՅՈՒՆ

5.6.1. Սույն կետով ենթակա է հատուցման ապահովագրված գույքի վնասը և/կամ կորուստը, որը հետևանք է գազախողովակների, կաթսաների, այլ տարաների կամ մեխանիզմների, ճնշման տակ աշխատող անոթների կամ այլ նմանատիպ սարքավորումների պայթյունի, որոնք նախատեսված են կենցաղային կամ արդյունաբերական նպատակներով օգտագործվող գազի պահեստավորման, տեղափոխման և վերամշակման համար:

5.6.2. Սույն Պայմանների շրջանակներում պայթյունն իրենից ներկայացնում է կարճատև ժամանակահատվածում սահմանափակ ծավալով մեծ էներգիայի նպատակային անջատման գործընթաց, որը պայմանավորված է նյութերի ընդարձակման հատկությամբ:

5.6.3. Եթե Վկայագրով հատուկ նշված է, ապա որպես պայթյունի հետևանք կապահովագրվի նաև պայթուցիկ նյութերի պայթյունի հետևանքով կրած վնասը և/կամ կորուստը: Պայթուցիկ նյութեր են համարվում այն նյութերը որոնք նախատեսված են այս կամ այն ձևով պայթյուն իրականացնելու համար:

5.6.4. Ռեզերվուարի (կաթսա, խողովակ և այլն) պայթյուն է համարվում միայն այնպիսի պայթյունը, երբ ռեզերվուարի պատերը մասնատվում են այնպես, որ ռեզերվուարի դրսի և ներսի ճնշումը կտրուկ հավասարվում է: Եթե պայթյունը տեղի է ունենում անոթի ներսում քիմիական փոխակերպումների հետևանքով, ապա անոթին հասցված վնասը հատուցվում է նույնիսկ այն դեպքում, երբ անոթի պատերը չեն մասնատվել կտորների:

5.6.5. Ապահովագրված չեն համարվում և հատուցման ենթակա չեն՝

ա) Ապահովադրի կամ այլ անձի կողմից թույլատրված գործունեության (ոչ կենցաղային գործունեություն) սահմաններում կատարված պայթյունի հետևանքով առաջացած վնասը և/կամ կորուստը,

բ) պայթյունի հետևանքով ներքին այրման շարժիչներին կամ նմանատիպ մեքենաներին և ագրեգատներին հասցված վնասը և/կամ կորուստը, որը տեղի է ունենում այրման խցիկում,

գ) հենց ռեզերվուարի պայթյունը, որն առաջացել է մաշվածությունից, ավելորդ (չափազանց) ժանգոտումից, նստվածքներից կամ պատերին առաջացող այլ նստվածքներից,

դ) արտադրական պրոցեսի սովորական բաղադրիչ մաս կազմող պայթյունների հետևանքով առաջացած վնասը և/կամ կորուստը,

ե) անոթի ներսում ճնշման նվազման հետևանքով (իմպլոզիա) առաջացած վնասը,

զ) պայթուցիկ նյութերի և դինամիտի պայթունի հետևանքով առաջացած վնասը: Պայթուցիկ նյութեր ասելով՝ հասկացվում է քիմիական նյութերի միացում կամ նյութերի խառնուրդ, որոնք հնարավորություն ունեն արագ քիմիական ռեակցիայի, որն ուղղորդվում է մեծ քանակությամբ ջերմության կամ գազերի արտադրությամբ, և հատուկ նախատեսված են տարբեր ձևերի պայթուցիկ աշխատանքների համար,

է) ցանկացած տեսակի պաշտպանող կանխարգելիչների, պաշտպանող անջատիչների, ամպրոպային պարպիչների, շանթարգելների կամ այլ նմանատիպ սարքավորումների ընթացիկ օգտագործման ժամանակ առաջացած վնասը և/կամ կորուստը,

5.6.6. Ապահովագրությունը չի ծածկում այն վնասը, որը վակուումի կամ ռեզերվուարում նոսրացած գազի հետևանք է:

5.6.7. Երրորդ անձանց կողմից անօրինական գործողությունների արդյունքում առաջացած պայթյունի հետևանքով պատճառված վնասը և/կամ կորուստը հատուցվում է միայն ապահովագրված «Այլ անձանց հակաօրինական գործողություններ» ռիսկով:

5.7. ՋՐԻ ՎՆԱՍ

5.7.1. Ջրի վնաս ասելով՝ հասկանում ենք ապահովագրված գույքի վնաս և/կամ կորուստ ջրի, այլ հեղուկի կամ գոլորշու ազդեցության հետևանքով, որն առաջացել է՝

- ջրմուղային, կոյուղային, ջեռուցման, հակահրդեհային (սպրինկլեռային),համակարգերի սառեցման, կամ օդափոխող համակարգերի հանկարծակի և անսպասելի վթարի/վնասի հետևանքով.
- հակահրդեհային համակարգերի (այդ թվում՝ սպրինկլեռների) հանկարծակի միացման հետևանքով,
- Ապահովադրին/Շահառուին չպատկանող հարևան տարածքներից/շինություններից ջրի և/կամ այլ հեղուկների ազդեցության հետևանքով:

5.7.2. Անշարժ գույքի ապահովագրության դեպքում ենթակա են հատուցման նաև՝

ա) ապահովագրված տարածքում/շինությունում շահագործվող խողովակաշարի հանկարծակի և անսպասելի վնասի վերացման ծախսերը, սակայն այդ դեպքում կհատուցվի բացի ապահովագրված գույքի վնասից նաև մինչև երկու գծամետր վնասված խողովակների փոխարինման ծախսերը (ձեռք բերում և փոխարինման աշխատանքներ) յուրաքանչյուր ապահովագրական պատահարի դեպքում,

բ) հանկարծակի սառեցման հետևանքով խողովակաշարի կրած վնասները, ինչպես նաև այդ խողովակաշարի հետ ուղղակի միացրած մեքենաների և սարքավորումների (փականներ, տանկեր, լոգարան, մարտկոցներ, կաթսաներ, ջրատաքացուցիչներ և այլն) վնասները,

գ) սառցակալած խողովակաշարի հալեցման համար նախատեսված ծախսերը:

5.7.3. Ապահովագրական պատահար չեն համարվում և հատուցման ենթակա չեն՝

ա) վնաս կամ կորուստ, որը կոյուղային ջրերի արտահոսքի հետևանք է, եթե, իհարկե, դա ջրհեղեղի հետևանք չէ:

բ) եթե Ապահովադրի կողմից չեն կատարվել կամ խախտվել են ջրմուղային, կոյուղային, ջեռուցման, հակահրդեհային (սպրինկլեռային), սառեցման, կամ օդափոխող համակարգերի տեղադրման/մոնտաժման և/կամ շահագործման պայմանները և/կամ ժամկետները:

5.7.4. Սույն Պայմաններով հատուցման ենթակա չեն ապահովագրված տարածքներից և/կամ սենյակներից դուրս գտնվող ջրմուղային, կոյուղային, ջեռուցման, հակահրդեհային (սպրինկլեռային), սառեցման կամ օդափոխող համակարգերի մասերի և նրանց խողովակների վերանորոգման, փոխարինման կամ հալեցման ծախսերը, եթե Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

5.7.5. Հակահրդեհային համակարգերի (սպրինկլեռների, հիդրանտների) հանկարծակի միացման հետևանքով առաջացած վնասը և/կամ կորուստը ենթակա է հատուցման միայն այն դեպքում, եթե դա հետևյալ իրադարձությունների կամ գործողությունների հետևանք չէ՝

- ապահովագրված անշարժ գույքի վերանորոգման կամ վերակառուցման,
- հակահրդեհային համակարգի տեղադրման, մոնտաժման, ապամոնտաժման, վերանորոգման կամ այդ համակարգի կառուցվածքի փոփոխության,
- շինարարական կամ մոնտաժման խոտանների կամ հենց հակահրդեհային և/կամ ազդանշանային համակարգի խոտանի, որի մասին Ապահովադիրը գիտեր կամ պետք է իմանար մինչև վնասի տեղի ունենալը:

Սույն բաժնով ապահովագրական հատուցում չի վճարվում այն դեպքերի համար, որոնք հետևանք են՝

- անձրևի կամ հալվող ձյան,
- անշարժ գույքի մաքրման/լվացման կամ ջրհեղեղի կամ ստորգետնյա ջրերի մակարդակի բարձրացման,
- վնասի, որը ջրմուղային, կոյուղային, ջեռուցման, հակահրդեհային (սպրինկլեռային), սառեցման կամ օդափոխող համակարգերի բնական մաշվածության, կորոզիայի կամ ժանգի հետևանք է,
- վնասի, որն առաջացել է Ապահովադրի և/կամ շահագործման համար պատասխանատու անձի կողմից վթարային/օգտագործման համար ոչ պիտանի վիճակում գտնվող ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու, ջրահեռացման, հակահրդեհային համակարգերի շահագործման կամ նման համակարգերի համար սահմանված շահագործման պայմանների և/կամ ժամկետների խախտման,
- վնասի, որը պատճառվել է պահեստավորված և/կամ տեղադրված այն գույքին (բացառությամբ կահույքի և իր մեջ գտնվող ապահովագրված գույքի), որը գտնվում է հատակից 20 սմ. ցածր բարձրության վրա, եթե Վկայագրով այլ բան նախատեսված չէ,
- շենքի/շինության ներսում խոնավության տեսքով առաջացած վնասների (բորբոս, փտածություն, սունկ)՝ անկախ խոնավության պատճառի,
- վնասի, որը տեղի է ունեցել մինչև Վկայագրի ուժի մեջ մտնելը, սակայն հայտնաբերվել է այն ուժի մեջ մտնելուց հետո:

5.7.6. Ապահովադիրը պարտավոր է ապահովել՝

ա) ջրմուղային, կոյուղային, ջեռուցման, հակահրդեհային, սառեցման, կամ օդափոխող համակարգերի պատշաճ շահագործումը, տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը,
բ) անջատել և ժամանակին ապահովել վերը նշված համակարգերի ազատում ջրից և գոլորշուց, այն դեպքերում, երբ ապահովագրված տարածքը և/կամ անշարժ գույքը չի շահագործվում և/կամ բնակվում ավելի քան 60 օր անընդմեջ,
5.7.7. 5.7.6 կետի պահանջները չկատարելու դեպքում Ապահովագրողն ազատվում է հատուցում վճարելու պարտավորությունից, եթե այդ պահանջների չկատարումը հանդես է եկել որպես ապահովագրական պատահարի պատճառ:

5.8. ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐ

5.8.1. Սույն բաժնով ենթակա է հատուցման ապահովագրված գույքի վնասը և/կամ կորուստը, որը հետևանք է՝
ա) Օդային զանգվածների տեղաշարժումների,
բ) Կարկուտի,
գ) Ջրհեղեղի,
դ) Երկրաշարժի,
ե) Հրաբխի ժայթքման,
զ) Լեռնային փլուզման
է) Գետնի նստվածքի,
ը) Սողանքների, փլուզումների,
թ) Ձյան մեծ կույտի, ձյան, ուժեղ անձրևի:
Սույն կետի ա-թ ենթակետերում նշված ռիսկերից յուրաքանչյուրը համարվում է ապահովագրված, եթե դա ուղղակիորեն նշված է Վկայագրում:

5.9. ՕԴԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾՆԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺՈՒՄ՝ ՈՒԺԵՂ ՔԱՄԻ, ՓՈԹՈՐԻԿ, ՀՈՂՄ, ՄՐՐԻԿ

5.9.1. Սույն բաժնով ուժեղ քամու, փոթորիկի, հողմի, մրրիկի և օդային զանգվածների այլ տեղաշարժումների հետևանքով պատճառված վնասը և/կամ կորուստը ենթակա է հատուցման, եթե քամին տվյալ պահին և վայրում գերազանցել է 20,8 մետր վայրկյանում և ավել կամ Բոֆորտի սանդղակով 9 բալ և ավել ուժգնությունը:
5.9.2. Օդային զանգվածների տեղաշարժումների հետևանքով հասցված վնաս ասելով՝ հասկացվում է ապահովագրված գույքին պատճառված վնասը և/կամ կորուստը, որն առաջացել է՝
ա) քամու հոսանքի արագության անմիջական մեխանիկական ազդեցությամբ.
բ) քամու հետևանքով շարժվող (տեղափոխվող) օբյեկտների, քարերի և/ կամ սառցե կամ ձյան մասերի հետ ուղղակի բախումից:
5.9.3. Ապահովագրողը կհատուցի ապահովագրված շինություններին ամրացված առարկաներին (ինչպիսիք են կայմերը, ալեհավաքները, օդորակիչները, բաց էլեկտրական լարերը, գովազդային նյութերը և այլն) պատճառված վնասը և/կամ կորուստը, եթե այդ մասին նշված է և ապահովագրության Վկայագրով,
5.9.4. Քամու արագությունը պետք է հաստատվի բնապահպանական հսկողություն իրականացնող պետական մարմինների կողմից տրված տեղեկանքով: Եթե այդպիսի տեղեկանք չի կարող ներկայացվել Ապահովադրի կողմից նրանից անկախ պատճառներով, ապա համարվում է, որ քամին եղել է բավարար արագությամբ, եթե Ապահովադիրն ապացուցի ստորև նշված պայմաններից գոնե մեկի առկայությունը՝
ա) ապահովագրության տարածքում կամ դրա շրջակայքում օդային մասսաների շարժը պատճառ է հանդիսացել լավ վիճակում գտնվող շենքի կամ այլ գույքի, որը կարող է շենքին համանման դիմանալ քամու համապատասխան ուժգնությանը, կորստի կամ վնասման,
բ) լավ վիճակում գտնվող ապահովագրված գույքի կորուստը կամ վնասումը կարող էր տեղի ունենալ միայն օդային զանգվածի տեղաշարժումների ազդեցությամբ:
5.9.5. 72 ժամ անընդմեջ տևած օդային զանգվածների տեղաշարժումների հասցրած վնասները դիտարկվում են որպես մեկ ապահովագրական պատահար:

5.10. ԿԱՐԿՈՒՏ

5.10.1. «Կարկուտ» ասելով հասկացվում է գնդաձև սառցե կտորների տեսքով մթնոլորտային տեղումները (կարկտահատ):
5.10.2. Կարկուտի հասցրած վնաս կամ կորուստ ասելով՝ հասկացվում է ապահովագրված գույքին հասցված վնաս, որն առաջացել է ապահովագրված գույքի վրա սառցե մասերի (կարկտահատերի) մեխանիկական ազդեցության հետևանքով:

5.10.3. 24 ժամ անընդմեջ կամ ընդհատումներով տևած կարկուտի հասցրած վնասները դիտարկվում են որպես մեկ ապահովագրական պատահար:

5.11. ՋՐՀԵՂԵՂ

5.11.1. Ջրհեղեղ ասելով՝ հասկացվում է ապահովագրված օբյեկտի վնասը կամ կորուստը հանկարծակի ջրով ծածկվելու պատճառով (ջրի տակ անցնելը), որը հետևանք է գետի, լճի, ծովի կամ այլ բնական աղբյուրների կամ արհեստական ջրամբարների ջրի մակարդակի բարձրացման, պատնեշների ճեղքվածքների, սահմանազատող ամբարտակների, ցունամիների, ինչպես նաև հորդառատ անձրևների:

5.11.2. Համաձայն Պայմանների՝ ապահովագրական պատահար չի համարվում խորտակումը, որը պայմանավորված է վերերկրյա ջրամբարներից ջրի դուրս գալու հետևանքով, ինչը կարելի էր կանխատեսել՝ ելնելով տեղական պայմաններից (տեղանքի ռելիեֆը, կլիման, ջրի սեզոնային տատանումները և այլն), որոնք հատկանշական են ապահովագրության տարածքի համար:

5.11.3. Համարվում է, որ ջրի ափերից դուրս գալը հնարավոր էր կանխատեսել, եթե վերջին երեսուն տարիներին այդպիսի իրադարձությունները տեղի են ունենում տասը տարիների կտրվածքով միջինում առավել հաճախ, քան մեկ անգամ (Վկայագրի գործողության սկզբի ամսաթվի դրությամբ):

5.11.4. Ջրհեղեղներից ապահովագրության շրջանակներում հատուցման ենթակա չեն վնասները, որոնք առաջացել են՝

ա) խոնավության հետևանքով առաջացած բորբոսից (փտում, սնկեր),

բ) հիմնային ջրերի պատճառով,

գ) կոյուղային ջրերի արտահոսքի հետևանքով, եթե, իհարկե, դա ջրհեղեղի հետևանք չէ:

5.12. ԵՐԿՐԱՇԱՐԺ

5.12.1. Երկրաշարժ ասելով՝ հասկացվում է ստորգետնյա ցնցումները և տատանումները, որոնք պայմանավորված են բնական պատճառներով:

5.12.2. Երկրաշարժի հասցրած վնասները ապահովագրությամբ ծածկվում են, եթե երկրաշարժը գրանցված է ապահովագրության տարածքում իրավասու սեյսմոգրաֆիկ ծառայությունների կողմից, և երկրաշարժի ուժգնությունը Ռիխտերի սանդղակով կազմել է 5 (հինգ) բալ և ավելի:

5.13. ՀՐԱԲԽԻ ԺԱՅԹՔՈՒՄ

5.13.1. Հրաբխի ժայթքում ասելով՝ հասկացվում է հրաբխի խառնարանից լավայի, մոխրի, տաք գազերի և լեռնային ապարների կտորների ելքը:

5.13.2. Հրաբխային ժայթքումից հասցված վնաս ասելով՝ հասկացվում է ապահովագրված գույքի վրա հալված լավայի, մոխրի, տաք գազերի կամ լեռնային ապարների կտորների անմիջական ազդեցության հետևանքով տեղի ունեցած վնասը կամ կորուստը:

5.14. ԳԵՏՆԻ ՆՍՏՎԱԾՔ

5.14.1. Գետնի նստվածք ասելով՝ հասկացվում է գետնի բնական իջեցումը բնական խոռոչների վրա (լեռնախոռոչների, ճեղքվածքների):

5.14.2. Ապահովագրական ծածկույթը չի տարածվում մինչև Վկայագրի գործողության սկիզբը տեղի ունեցած գետնի նստվածքների հետևանքով առաջացած վնասների և/կամ կորուստների վրա:

5.14.3. Ապահովագրական ծածկույթը չի տարածվում հետևյալ պատճառներով առաջացած գետնի նստվածքի հետևանքով վնասի կամ կորուստի վրա՝

ա) բնահողի սառեցման և հալման հետևանքով,

բ) բնահողի դինամիկ ներգործության (վիբրացիայի) հետևանքով,

գ) բնահողի գերչորացման, դրենաժի (ցամաքեցման) հետևանքով,

դ) տարբեր տեսակի շինարարական աշխատանքների, մասնավորապես՝ հողի հեռացման, ստորգետնյա հաղորդակցության միջոցների տեղադրման, քանդելու, փորելու, շենքերի կապիտալ վերանորոգման և վերակառուցման հետևանքով,

ե) պայթեցման աշխատանքներ կատարելու, օգտակար հանածոներ մշակելու, արդյունահանելու հետևանքով,

զ) բնահողի մերձափյա և գետային քայքայման (էրոզիայի) հետևանքով,

է) նոր կառուցված շինությունների նորմալ նստեցման հետևանքով,

ը) հիմքային ջրերի ազդեցության հետևանքով:

5.14.4. Հողի նստվածքի դեպքում ապահովագրությունը չի հատուցում այն վնասները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ծագել են՝

ա) երկրաշարժից,

բ) հրաբխային ժայթքումից,

գ) ջրհեղեղից, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ռիսկերից ապահովագրությունը նախատեսված է Վկայագրով:

5.15.ՍՈՂԱՆՔ (ՓԼՈՒԶՈՒՄ)

5.15.1. Սողանք (փլուզում) ասելով՝ հասկացվում է բնահողի բնական սահքը, քարերի և հողակույտերի վայր ընկնելը, ներառյալ՝ քարաթափը և ցեխաջուրը:
5.15.2. Սողանքից (փլուզումից) ապահովագրությունը չի ծածկում բնահողը վերականգնելու ծախսերը:
5.15.3. Ապահովագրական ծածկույթը չի տարածվում սողանքից (փլուզումից) առաջացող այն վնասների վրա, որոնք առաջացել են՝
ա) տարբեր տեսակի շինարարական աշխատանքներից, մասնավորապես՝ հիմնահողի հանումից կամ ստորգետնյա կոմունիկացիաների անցկացումից, շենքերի քանդումից, կապիտալ վերանորոգումից կամ վերակառուցումից,
բ) պայթեցման աշխատանքներ կատարելիս, օգտակար հանածոներ մշակելիս կամ արդյունահանելիս,
գ) բնահողի մերձափյա կամ գետային քայքայումից (էրոզիայից),
դ) նոր կառուցված շինությունների նորմալ նստեցման հետևանքով:
5.15.4. Սողանքից (փլուզումից) ապահովագրությունը չի ծածկում վնասները, որոնք ուղղակի կամ անուղղակիորեն կապված են երկրաշարժի, հրաբխային ժայթքումի, ջրհեղեղի հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ռիսկերից ապահովագրությունը նախատեսված է Վկայագրով:

5.16. ՃՅԱՆ ՄԵԾ ԿՈՒՅՏ, ՃՅՈՒՆ, ՈՒԺԵՂ ԱՆՁՐԵՎ

5.16.1. Ճյան մեծ կույտ ասելով՝ հասկացվում է ձյան կամ սառույցի շարժվող զանգվածը, որը սահելով իջնում է լեռնալանջից:
5.16.2. Ճյան և սառցե զանգվածների մեխանիկական ազդեցության հետ միասին ձյան մեծ կույտից ապահովագրությունը ծածկում է նաև այդ կույտն ուղեկցող օդի ճնշման հասցրած վնասը:
5.16.3. Ճյան կամ ուժեղ անձրևի հասցրած վնասը կամ կորուստը համարվում է ապահովագրական պատահար, եթե այդ մթնոլորտային երևույթները եղել են անսովոր այդ տեղանքի համար և՝
- ապահովագրված գույքը վնասվել է ձյան ճնշման հետևանքով, որի տեղումների քանակը եղել է ոչ պակաս, քան 20 մմ և տևողությունը՝ ոչ պակաս, քան 12 ժամ անընդհատ
- ապահովագրված գույքը վնասվել է ուժեղ անձրևի հետևանքով, ինչը նշանակում է, որ տեղումների քանակը եղել է ոչ պակաս, քան 100մմ և տևողությունը՝ ոչ պակաս, քան 12 ժամ կարճ ընդհատումներով (ոչ ավել, քան 1 ժամ):
5.16.4. Սույն կետով նախատեսված ապահովագրությունը չի ծածկում այն վնասները, որոնք հասցվել են կառուցման պրոցեսում գտնվող շենքին (շինությանը), կիսակառույց շինություններին, չշահագործվող շենքին, ինչպես նաև այդպիսի շենքում (շինության մեջ) գտնվող գույքին:
5.16.5. Ճյան կամ ուժեղ անձրևի հետևանքով բացօթյա տեղադրված ապահովագրված գույքի վնասը կամ կորուստը ենթակա չէ հատուցման, եթե այլ բան նախատեսված չէ Վկայագրով:
5.16.6. Ճյան մեծ կույտի ապահովագրությունը չի ծածկում վնասը և/կամ կորուստը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ծագել է երկրաշարժի, ջրհեղեղի հետևանքով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ռիսկերից ապահովագրությունը նախատեսված է Վկայագրով:

5.17. ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

5.17.1. Սույն բաժնով ապահովագրական պատահար է համարվում և ենթակա է հատուցման գույքի վնասը և/կամ կորուստը, որը հետևանք է հանդիսանում՝
ա) Բախման, հարվածի,
բ) Օխի ազդեցության:
5.17.2. Բախում կամ հարված ասելով՝ հասկացվում է ապահովագրված գույքի վնասը կամ կորուստը, որն արդյունք է՝
- տրասնպորտային միջոցի կամ դրանով տեղափոխվող բեռի հետ բախման,
- կենդանիների հետ բախման,
- օդային տրանսպորտային միջոցների և/կամ թռչող սարքերի և ապարատների, նրանց բեկորների, մասերի վայր ընկնելու հետևանքով բախման,
- թռչող սարքերի առաջացրած ձայնային ալիքների հարվածի,
- սյուների (այդ թվում՝ լուսավորող հենքերի և այլն), ծառերի, ճյուղերի, շինարարական ամբարձիչների և այլ շինարարական մեխանիզմների անկման հետևանքով հարվածի:
5.17.3. Սույն բաժնում նշված ապահովագրությունը չի ծածկում՝
ա) Ապահովադրին, նրա աշխատակիցներին կամ Ապահովադրի ընտանիքի անդամներին, բարեկամներին կամ ապահովագրված շենքի սեփականատիրոջը պատկանող և/կամ վարձակալած տրանսպորտային միջոցի և/կամ կենդանու և/կամ օդային տրանսպորտի և/կամ թռչող սարքի (նշված ցանկացած տրանսպորտային միջոցներով տեղափոխվող բեռի) կողմից պատճառված վնասները: Եթե

Ապահովադիրը ֆիզիկական անձ է, ապա սույն կետով սահմանված դրույթները տարածվում են նաև նրա բարեկամների (հայր, մայր, քույրեր, եղբայրներ, երեխաներ) վրա:
բ) վնասները, որոնք տեղի են ունեցել ավտոմոբիլային ճանապարհներով (հասարակական օգտագործման ճանապարհներով) ապահովագրության օբյեկտների տեղափոխման ընթացքում:
5.17.4. Ծխի ազդեցություն նշանակում է ապահովագրված գույքի ցանկացած վնաս և/ կամ կորուստ, որը տեղի է ունեցել հրդեհի արդյունքում (անկախ հրդեհի վայրից) առաջաց ծխի կամ մրի հետևանքով:

5.18.ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.18.1. Սույն բաժնով ապահովագրական պատահար է համարվում և ենթակա է հատուցման գույքի վնասը և/կամ կորուստը, որը հետևանք է հանդիսանում՝
ա) Հափշտակության՝ գողություն, կողոպուտ, ավազակություն,
բ) Երրորդ անձանց անօրինական գործողությունների:
5.18.2. Պայմաններին համապատասխան գողություն կամ կողոպուտ ասելով՝ հասկացվում է այնպիսի հափշտակում, որի դեպքում հանցագործը կատարել է ստորև նշված գործողություններից որևէ մեկը՝
5.18.2.1 Կոտրանքի և/կամ ուժի գործադրման միջոցով ներխուժում ապահովագրված տրասպորտային միջոց կամ ապահովագրության տարածք կամ այն տարածք (շենք, շինություն, պահեստ, բնակարան, բնակելի շենք կամ տուն, գրասենյակ և այլն), ուր գտնվում է ապահովագրված գույքը (հետագայում՝ Տարածք), ընդ որում՝
ա) կատարվել է անօրինական ներխուժում Տարածք՝ կոտրելով (ճեղքելով, անցք բացելով) կամ վնասելով տարածքի պատերը, ցանկապատը, դռները, պատուհանները, կտուրը կամ կոնստրուկտիվ այլ էլեմենտները,
բ) օգտագործվել են կեղծ բանալիներ կամ այլ տեխնիկական միջոցներ (ներառյալ՝ էլեկտրոնային),
գ) ներխուժել են տարածք, իսկ դուրս գալու համար օգտագործելՊայմանների 5.18.2.1 «ա» և/կամ «բ» կետերում նշված միջոցներից մեկը:
5.18.3. Ավազակություն նշանակում է ապահովագրված գույքը (կամ այն բանալիները, որոնք օգտագործվում են Տարածք մուտք գործելու համար) հափշտակելու նպատակով հարձակում, որը կատարվել է Ապահովադրի, նրա աշխատակիցների կամ գույքի պահպանման համար պատասխանատու անձանց կամ Ապահովադրի ընտանիքի անդամների կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ գործադրելու սպառնալիքով:
5.18.4. Գողության մնացած դեպքերը (սովորական գողություն) չեն համարվում ապահովագրական պատահար և ենթակա չեն հատուցման, եթե Վկայագրով այլ բան նախատեսված չէ: Սույն սահմանափակումը (բացառությունը) չի վերաբերում այն ապահովագրված գույքի հափշտակությանը, որը Ապահովադիրը կրում է կամ տեղափոխում է իր հետ, այն է՝ բջջային հեռախոս, համակարգչային տեխնիկա, ոսկերչական զարդեր և իրեր, կանխիկ գումար, բանկային քարտեր, ժամացույց և այլ նմանատիպ շարժական և անձնական օգտագործման իրեր: Եթե հափշտակության պահին այս կետում նշված գույքը կրել է և/կամ տեղափոխել է ֆիզիկական անձ Ապահովադրից բացի այլ անձ (բացառությամբ նրա ընտանիքի անդամների), ապա այդ պատահարը չի համարվի ապահովագրական և հատուցման ենթակա չի լինի: Եթե Ապահովադիրը իրավաբանական անձ է, ապա նրա աշխատակիցը, ում մոտից հափշտակվել է սույն կետով նշված գույքը, պետք է ապացուցի, որ նա իրավունք ուներ կրելու և կամ տեղափոխելու այդ գույքը: Նշվածը ապացուցելու պարտավորությունը կրում է նաև Ապահովադիրը:
5.18.5. Հափշտակություն ռիսկից ապահովագրության դեպքում տրանսպորտային միջոցը ցանկապատված պահպանվող տարածքում կամ փակ տարածությունում կայանելու ժամանակ ապահովագրությունը ծածկում է նաև առանց առևանգելու նպատակ հետապնդելու տրանսպորտային միջոցին անօրինական ձևով տիրանալը, պայմանով, որ տվյալ իրադարձությունը համապատասխանում է Պայմանների 5.18.2.1 կետին:
5.18.6. Սույն բաժնով նախատեսված ապահովագրության համաձայն՝ հատուցման ենթակա չէ վնասը և/կամ կորուստը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված է՝
ա) Ապահովադրի կամ նրա ընտանիքի անդամների, բարեկամների կանխամտածված գործողությունների հետ, եթե Ապահովադիրը հանդիսանում է ֆիզիկական անձ,
բ) Ապահովադրի աշխատակցի կանխամտածված գործողությունների հետ:
5.18.7. Հափշտակությունը համարվում է իրականացված միայն այն դեպքում, եթե տվյալ իրադարձության փաստով քննչական մարմինների կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կայացվել է որոշում՝ հանցագործության հատկանիշներով քրեական գործ հարուցելու մասին:
5.18.8.Ապահովագրության տարածքում միայն գույքի անհետացման փաստը բավարար ապացույց չէ, որ օգտագործվել է կեղծ բանալի,
5.18.9. Ապահովագրական պատահար է համարվում և ենթակա է հատուցման նաև այն վնասը և/կամ կորուստը, որը հափշտակության փորձի հետևանք է:
5.19. Սույն բաժնով ապահովագրական պատահար են համարվում նաև հետևյալ իրադարձությունները՝

- Գույքի դիտավորյալ ոչնչացումը կամ վնասումը,
- Գույքի անզգուշությամբ ոչնչացումը կամ վնասումը,
- Վանդալիզմը:
5.20. Սույն բաժնով ապահովագրական պատահար չի համարվում և չի հատուցվում ապահովագրված գույքի կորուստը և/կամ վնասը, որը հետևանք է հանդիսանում այն գործողությունների, որոնք իրավասու պետական մարմինների կողմից դասակարգված են վերը թվարկվածներից այլ կերպ: ՀՀ քրեական օրենսգրքում նշված դասակարգումների անվանումները փոփոխվելու դեպքում դրանք համապատասխանորեն ինքնաշխատ կվերանվանվեն:
5.21. Ապահովագրական դեպք չի համարվում և հատուցում չի վճարվում, եթե հափշտակությունը տեղի է ունեցել տարածքում անջատված կամ անսարք վիճակում գտնվող ազդանշանային համակարգի դեպքում, սակայն միայն եթե այդ համակարգի առկայությունը նշված է Վկայագրում և հաշվի առնելով Պայմանների պահանջները:
5.22. Սույն բաժնով հատուցումը չի տրամադրվում ապահովագրված գույքի անբացատրելի կորստի դեպքում:

6.ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1. Համաձայն սույն Պայմանների՝ ապահովագրության ենթակա է հողատարածքների (հողամասերի) անպիտանելիության ռիսկը:
6.2. Հողամասերը՝ որպես ապահովագրության օբյեկտ, կարող են ապահովագրվել միայն սույն Պայմաններում նշված ռիսկերից և միայն ի լրումն այդ տարածքներում գտնվող անշարժ գույքի ապահովագրությանը:
6.3. Հողամասերը՝ որպես ապահովագրության օբյեկտ, կարող են ապահովագրվել միայն, եթե այն հատուկ նշված է Վկայագրում:
6.4. Անպիտանելիության ռիսկ ասելով հասկանում ենք՝
- ապահովագրված հողատարածքի աղտոտում, աղբալցում սույն Պայմաններում նշված իրադարձությունների հետևանքով (բացառությամբ այն վնասների, որոնք բնական/բնության երևույթների հետևանք են, որոնք չունեն հանկարծակի, անսպասելի, տարերային բնույթ),
- բերքատու շերտի վնասում, նաֆթամթերքներով և այլ նյութերով աղտոտում,
- այլ վնաս, որն անսպասելի, կարճաժամկետ, անկանխատեսելի բնույթ ունի և բերում է հողամասի նպատակային օգտագործման անպիտանելիությանը,
- այլ անձանց անօրինական, կանխամտածված գործողություններ:
6.5. Ապահովագրական դեպք չի համարվում հողամասի վնասը, սողանքը, ստորգետնյա ջրերի ազդեցությունը կամ ջրասուզումը, որը կրում է մշտական (կրկնվող) բնույթ այդ տեղանքի համար:
6.6. Որպես ապահովագրական արժեք՝ ընդունվում է նմանատիպ հողատարածքների համար առկա միջին շուկայական արժեքը:
6.7. Ապահովագրական պատահարի ժամանակ Ապահովագրողը ապահովագրական գումարի սահմաններում հատուցում է մաքրման, աղտահանման հետևանքները վերացնելու համար նախատեսված ծախսերը, ինչպես նաև այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են իրականացնել, որպեսզի ապահովագրված հողատարածքը բերվի իր նպատակային օգտագործման պիտանելիությանը:
6.8. Եթե ծախսերը, որոնք անհրաժեշտ են, որպեսզի ապահովագրված հողատարածքը բերվի իր նպատակային օգտագործման պիտանելիության վիճակին կամ անհրաժեշտ են ապահովագրված հողատարածքի կոնսերվացման համար, գերազանցում են ապահովագրական գումարը, կամ եթե նշված հողակտորը անհնարին է օգտագործել իր նպատակով ավելի քան 3 տարի, ապա Ապահովագրողը կհատուցի Ապահովադրին ապահովագրական գումարի սահմաններում ապահովագրական պատահարի օրվա դրությամբ այդ հողամասի միջին շուկայական արժեքի չափով:

7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՊԱԿԻՆԵՐԻ, ՀԱՅԵԼԻՆԵՐԻ ԵՎ ՑՈՒՑԱՓԵՂԿԵՐԻ ԿՈՏՐՈՒՄԻՑ

7.1. Սույն բաժնով ապահովագրական պատահար է համարվում և ենթակա է հատուցման հետևյալ գույքի վնասումը կամ կորուստը, որոնք սույն Պայմաններում կամ Վկայագրում նշված ռիսկերի հետևանք են՝
ա) պատուհանի կամ դռան ապակի, ապակե պատ, հայելի, ցուցափեղկի կամ պատուհանի և դռան շրջանակի մեջ տեղադրված կամ շենքի, շինության, բնակարանի կամ այլ անշարժ գույքի կոնստրուկտիվ էլեմենտներ (հարդարանքի, ինտերիերի տարրեր), դրանց ամրակցման տեղերում մոնտաժված նույնատիպ ապակե իրեր,
բ) ապակե դետալներ, նեոնային կամ նույնատիպ այլ լամպերից պատրաստված լուսային կամ գովազդային սարքեր:
Ապահովագրողն ապահովագրական հատուցում վճարում է նշված գույքի վնասման կամ կորուստի դիմաց միայն այն դեպքում, երբ ճեղքը հատում է վնասված ապակու ամբողջ հաստությունը և վնասի պատճառ են հանդիսանում սույն Պայմաններում նշված պատահարները:

Ապահովագրությունը չի տարածվում այն շենքի (կառույցի) ապակիներին հասցված վնասի վրա, որտեղ կատարվում են շինարարական, շինմոնտաժային կամ վերանորոգման աշխատանքներ:
7.2. Սույն բաժնով նախատեսված ապահովագրության շրջանակներում հատուցման ենթակա չէ վնասը, որը պատճառվել է՝
ա) ապահովագրված ապակիների պատահական կամ կանխամտածված ներկման արդյունքում,
բ) ապակիների կամ ապակյա իրերի մակերևույթի վնասման (օրինակ՝ քերծվածքի կամ փոքր ճեղքերի) հետևանքով:
7.3. Սույն բաժնով նախատեսված ապահովագրության համաձայն՝ հատուցման ենթակա չեն վնասները, որոնք ուղղակի կամ անուղղակիորեն կապված են՝
ա) ապակու և/կամ նրա մասերի, ֆուրնիտուրայի, պատուհանի շրջանակի կամ դրանց մշտական ամրացման, այլ տեղերից հեռացման կամ ապամոնտաժման հետ, ինչպես նաև վնասը կամ կորուստը, որը տեղի է ունեցել ապակիների տեղադրման ժամանակ:
բ) նոր կառուցված անշարժ գույքի նորմալ նստվածքի հետ,
գ) ապակու կոտրվելու հետ՝ ֆիզիկական մաշվածության կամ պատուհանների շրջանակների և հիմքերի վատացման հետևանքով,
դ) ցանկացած այլ իրադարձության/ռիսկի հետ, որոնք նշված չեն սույն Պայմաններում, այդ թվում՝ հանկարծակի վնաս կամ կորուստ:
7.4. Եթե պայմանագրում այլ բան նախատեսված չէ, ապա ցանկացած անշարժ գույք կապահովագրվի, ուր կներառվի ապակիների առկայությունը որպես բոլոր դռների և պատուհանների վրա տեղադրված: Հատուկ և/կամ լրացուցիչ ապակիներով (ապակե պատ, հայելի, ցուցափեղկ, նեոնային կամ նույնատիպ այլ լամպերից պատրաստված լուսային կամ գովազդային սարքեր և այլն) հագեցած անշարժ գույքի ապահովագրության դեպքում նշված ապակյա իրերը և կոնստրուկցիաները կհամարվեն ապահովագրված միայն այն դեպքում, երբ նրանք հատուկ նշված են Վկայագրում:
7.5. Բոլոր ապակիները կընդունվեն որպես սովորական որակի ապակիներ, բացառությամբ այն դեպքերի, երբ ապակին ունի առանձնահատուկ (գունավոր, հայելապատ, զրահապատ և այլն) հատկություն և այդ մասին նշված է Վկայագրում:
7.5. Սույն բաժնով հատուցման ենթակա չէ այն վնասը կամ կորուստը, որը պատճառվել է սույն բաժնով նշված գույքին հանկարծակի և անսպասելի իրադարձության և/կամ գործողությունների հետևանքով:

8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՂՂԱԿԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎՆԱՍԻՑ

8.1. Սույն բաժնով հատուցման ենթակա է ապահովագրված գույքի վնասը և/կամ կորուստը, որը ֆիզիկական գործոնի ուղղակի, անսպասելի, անկանխատեսելի ներգործության հետևանք է, և որոնք տարբերվում են Պայմաններում նշված ռիսկերից և միաժամանակ չեն մտնում Պայմաններում նշված բացառությունների մեջ: Ուղղակի ֆիզիկական վնասից ապահովագրության ռիսկը կարող է ապահովագրվել միայն, եթե այն հատուկ նշված է Վկայագրում:
8.2. Ուղղակի ֆիզիկական վնաս նշանակում է վնաս կամ կորուստ, որն առաջացել է հանկարծակի, անսպասելի, կարճաժամկետ տևողությամբ (մինչև 1 ժամ) իրադարձությունների հետևանքով, որի տեղի ունենալն Ապահովադիրը, Շահառուն կամ նրանց աշխատակիցները կամ ընտանիքի անդամները կամ այլ անձիք, որոնք իրավունք ունեն շահագործել և/կամ օգտագործել ապահովագրված գույքը, չէին կարող կանխատեսել իրենց գործունեության իրականացման համար անհրաժեշտ մասնագիտական հմտությունների հիման վրա, և այդ իրադարձությունները տեղի են ունեցել նշված անձանց կամքից անկախ: Ուղղակի ֆիզիկական վնասի ռիսկով ապահովագրված գույքի վնասը և/կամ կորուստը, որը տեղի է ունեցել ցանկացած այլ անձի մեղքով և/կամ պատճառով ենթակա չէ հատուցման;
8.3. Սույն բաժնի շրջանակներում վնաս ասելով՝ հասկացվում է գույքի ֆիզիկական վիճակի ոչ բարենպաստ փոփոխությունը: Վնասը չի համարվում տեղի ունեցած, եթե որևէ թերություն, անկախ այն բանից փոխել է այն գույքի ֆիզիկական վիճակը թե ոչ, գոյություն ուներ մինչև Վկայագրի գործողության սկիզբը,
8.4. Սույն բաժնով նախատեսված ապահովագրության համաձայն՝ հատուցման ենթակա չեն վնասները, որոնք ուղղակի կամ անուղղակիորեն կապված են՝
ա) շահագործման մեջ մտցնելու, հենց շահագործման, տեխնիկական սպասարկման կամ մեխանիկական, էլեկտրատեխնիկական կամ էլեկտրական սարքավորումների վերանորոգման հետ (օրինակ՝ սպասարկող անձնակազմի մեղքով թերություն, չափիչ, կառավարիչ, բաշխիչ կամ կարգավորիչ սարքավորումների փչացումը, ջրի, յուղի կամ քսանյութերի անբավարարությունը),
բ) սովորական մաշվածքի կամ հնանալու հետ,
գ) քայքայման (կոռոզիայի), ժանգոտման հետ,
դ) կոսմետիկ վնասվածքների հետ՝ քերծվածքներ, փոքր ճեղքեր, կեղտաբծեր, ներկի վնասվածքներ, գունաթափում,

ե) գույքի պահպանման տարրական նորմերի խախտման հետ՝ հասարակական վայրում առանց հսկողության թողնելը, այդ թվում՝ առանց հսկողության տրանսպորտային միջոցում թողնելը, բաց դռներով և/կամ պատուհաններով տրանսպորտային միջոցում թողնելը, բաց տարածքում անձրևի, ձյան տակ և այլ նույնատիպ վիճակներում թողնելը,
զ) Ապահովադրի և/կամ գույքի ցանկացած շահագործողի և/կամ օգտագործողի գույքին վնաս կամ կորուստ պատճառելու միտումնավոր գործողությունների հետ,
է) բնական պայմանների սովորական ազդեցության հետ, որոնք սեզոնային կամ տեղային պայմաններից ելնելով պետք է հաշվի առնվեն,
ը) գույնի, հոտի կամ քաշի փոփոխության հետ, նստվածքի, իջեցման, բաժանման, կծկման կամ ընդլայնման հետ,
թ) ներքին փչացման, հոտելու, խոնավության, տաքանալու կամ սառելու, միկրոօրգանիզմների, կենդանիների կամ բույսերի ազդեցության հետ, ոչ նպատակային օգտագործման հետ,
ժ) ապահովագրված գույքի վրա նկարելու, գրելու, քանդակներ անելու, ինչ որ բան փակցնելու և նմանատիպ այլ գործողությունների հետ:
ի) գույքի բնական առանձնահատկությունների հետ,
լ) էլեկտրական հոսանքի տատանումների հետ, էներգիայի մատակարարման կամ կորստի հետ,
խ) ներքին խնդիրների հետ՝ վիբրացիայի, գերլարվածության, գործարանային թերությունների և խոտանների, այդ թվում՝ օդորակիչների , գույքի սառեցման և ջեռուցման համակարգերի, ինչպես նաև միկրոկլիմա ապահովող համակարգերի ջարդվելու, ոչ ճիշտ շահագործման կամ ժամանակավոր դադարեցման հետ,
ծ) գեների, գենային մուտացիաների կամ այլ գենային փոփոխությունների գործողությունների հետ,
կ) չորացման կամ գերչորացման հետ,
հ) մշակման կամ վերամշակման հետ,
ձ) խմորման կամ արտաջերմային տարալուծման հետ,
ղ) շիկացած հալվածքների ճեղքման հետ,
8.5. Սույն ռիսկը ենթակա է ապահովագրության, եթե դա հատուկ նշված է Վկայագրում:

9. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

9.1. Սույն բաժնով հատուցման ենթակա է էլեկտրական սարքերի և սարքավորումների վնասը կամ կորուստը, որն ուղղակի հետևանք է էլեկտրական հոսանքի տատանման՝ կարճ միացման, էլեկտրացանցում բեռնվածության, էլեկտրական հոսանքի լարման անկման կամ բարձրացման, էլեկտրական ինդուկցիայի, թափառող ալիքների կամ մագնիսականության ազդեցության (այսուհետ՝ հոսանքի ազդեցություն), կամ ուղեկցվել է կայծերով կամ տաքությամբ, բացառությամբ բաց կրակի ծագման դեպքերի:
9.2. Սույն բաժնով ապահովագրվում է միայն առանձին ցուցակով ներկայացված գույքը: Այն գույքը, որը ներառված չէ ցուցակում, չի համարվում ապահովագրված:
9.3. Հոսանքի ազդեցության փաստը որոշվում է համաձայն էլեկտրական էներգիայի ոլորտում հաստատված չափանիշների, տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիության և էլեկտրական էներգիայի որակի նորմերի, էլեկտրական հոսանքի մատակարարման ընդհանուր նշանակության:
9.4. Հոսանքի ազդեցության փաստը հաստատվում է էլեկտրական էներգիա մատակարարող ընկերության կողմից:

10. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ

10.1. Ի լրումն ապահովագրական պատահարի վրա հասնելու հետևանքով ապահովագրված գույքին պատճառված վնասի հատուցմանը՝ Ապահովագրողը, եթե դա նշված է Վկայագրում, և Ապահովադրի կողմից վճարված է լրացուցիչ ապահովագրավճար, հատուցում է նաև հետևյալ խելամիտ և նպատակաուղղված լրացուցիչ ծախսերը, որոնք անհրաժեշտ են ապահովագրական պատահարից հետո՝
- վնասված ապահովագրված գույքի և/կամ նրա մնացորդների ժամանակավոր (մինչև 72 ժամ) պահպանման համար (պահպանության ծախսեր), որոնք ենթակա են հատուցման Ապահովագրողի կողմից և որի վերաբերյալ Ապահովագրողը տվել է իր գրավոր համաձայնությունը:
- ապահովագրության տարածքի/վնասի վայրի մաքրման ծախսեր (ապահովագրական պատահարի ծագման վայրերում), ներառյալ՝ ապահովագրված գույքի և/կամ նրա մնացած մասերի/դետալների տեղահանումը/տեղափոխումը այլ վայր/տարածք,
- ապահովագրական պատահարի վրա հասնելու հետևանքով առաջացած աղբի դուրս հանումը և այլ մնացորդների (միայն ապահովագրված գույքի մասով)՝ մոտակա աղբանոց տեղափոխելու, վերացնելու կամ վառելու ծախսերը (մաքրման և կոտրման ծախսերը, ուտիլիզացիա): Եթե տարերային աղետի արդյունքում մաքրման վայրը/տարածքը դուրս է գալիս ապահովագրության տարածքից, ապա

հատուցվում են մաքրման միայն այն ծախսերը, որոնք վերաբերում են ապահովագրված գույքին և ապահովագրության տարածքին: Վերը նշված մաքրման և աղբի դուրս հանման ծախսերը հատուցվում են առավելագույնը ապահովագրական գումարի 10%-ի չափով:

- վնասված ապահովագրված գույքի մոնտաժման, ապամոնտաժման և ամրացման ծախսերը,
- փաստաթղթերով թղթապանակների (ֆայլերի) վերականգնման կամ կրկնակի թողարկման, նախագծերի, գործարար գրքերի, քարտերի, գծագրերի կամ այլ փաստաթղթայնացված տեղեկատվության (փաստաթղթերի), այդ թվում՝ մագնիսային ժապավենների, սկավառակների կամ ինֆորմացիայի այլ տեխնիկական կրիչների վրա կատարված ծախսերը՝ համապատասխան Պայմանների 12.7.9. կետի՝ ներառյալ հենց տվյալների կրիչների արժեքի հատուցումը: Ցանկացած դեպքում հատուցման ենթակա չեն Ապահովադրի համար այդպիսի փաստաթղթայնացված տեղեկատվության ներքին արժեքը: Եթե տեղեկատվության վերականգնում չի պահանջվում, ապա Ապահովագրողը հատուցում է միայն տեղեկատվության կրիչների արժեքը:

10.2. Եթե Վկայագրով սահմանված է, ապա Ապահովագրողը հատուցում է նաև Ապահովադրի խելամիտ և նպատակաուղղված ծախսերը, որոնք առաջացել են սույն Պայմաններին համապատասխանող կոտրանքի միջոցով կողոպուտի կամ ավազակության հետևանքով և կողպեքի կամ բանալու փոփոխության պատճառով:

10.3. Եթե Վկայագրով սահմանված է, ապա սույն Պայմանների համապատասխան բաժնի ապակիների կոտրման պատահարից ապահովագրության դեպքում Ապահովագրողը հատուցում է նաև այն ծախսերը, որոնք կապված են՝

ա) կոտրված ապակիների ժամանակավոր փոխարինման հետ այն դեպքում, երբ հնարավոր չէ ապակիները անմիջապես փոխարինել կոտրվածների ամբողջական համանմանների հետ,

բ) ապակիների փոփոխությանը խոչընդոտող առարկաների (շերտավարագույրներ, վանդակաճաղեր և այլն) մոնտաժի և ապամոնտաժի հետ,

գ) փայտանյութերի կամ ավտոամբարձիչի վարձակալության ծախսերի և մոնտաժի հետ, եթե դրանք անհրաժեշտ են բարձր հարկերում ապակիների փոփոխության համար,

դ) կոտրված ապակիների ներկման, նկարազարդման, փորագրման կամ այլ զարդարման հետ, եթե այդպիսի ապակիներ եղել են ապահովագրված և նշված են եղել Վկայագրում,

ե) կոտրված ապակիների փոխարեն լուսային գովազդային սարքավորումների մոնտաժով և հավաքումով:

11. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

11.1. Ապահովագրական պատահար չի համարվում և Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չէ հասցված այն վնասը, որն առաջացել է՝

ա) ապահովագրված գույքի վրա անձրևի, կարկուտի, ձյան, ցեխի կամ այլ տեղումների ազդեցության հետևանքով, որոնք՝

- ներթափանցում են շենքերի/շինությունների բաց պատուհանների, դռների, ջրատար խողովակների և/կամ ծածկի հատման տեղերից, ձեղնահարկից, պանելային կարերից կամ այլ անցքերից, և/կամ
- շինության հնության պատճառով առաջացած անցքերից, շինության կառուցվածքային սխալների/թերությունների, այդ թվում՝ տանիքի կամ միջպանելային անցքերի հիդրոմեկուսացման թերությունների հետևանքով, եթե միայն այդ անցքերը չեն առաջացել բնական աղետների պատճառով,

բ) վնասը և/կամ կորուստը, որն առաջացել է վթարային/օգտագործման համար ոչ պիտանի վիճակում գտնվող գույքին,

գ) Ապահովադրի կամ պատասխանատու անձի կողմից սառեցման, ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու, ջրահեռացման, անվտանգության և այլ համակարգերի շահագործման և/կամ օգտագործման կամ նման համակարգերի համար սահմանված շահագործման պայմանների, նորմերի և/կամ ժամկետների խախտման հետևանքով,

դ) ապահովագրված անշարժ գույքի մեջ խոնավության ներգործության հետևանքով (սունկ, նամշաձություն և այլն),

ե) շենքի, շինության կամ նրա մի մասի հանկարծակի ճեղքվածքների և/կամ փլուզման պատճառով, եթե դա ապահովագրական դեպքի հետևանք չէ, այդ թվում՝ նրա հնության կամ վթարված լինելու պատճառով,

զ) շարժական գույքին, որը գտնվում է անշարժ գույքից դուրս, բացի այն գույքից, որն ամրացված է շենքին արտաքին կողմից, (օրինակ՝ ցուցափեղկեր, լյումինեսցենտային սարքավորումներ, շերտավարագույրներ և ալեհավաքային սարքավորումներ), եթե այլ բան նախատեսված չէ Վկայագրով,

է) շենքին, որը կառուցվել է շինարարական նորմերի և կանոնների խախտումով կամ շենքին, որը գտնվում է տեխնիկապես վատ վիճակում կամ պահանջում է կապիտալ վերանորոգում, ինչպես նաև այդպիսի շենքում գտնվող գույքին:

ը) անշարժ գույքին, որը գտնվում է շինարարության պրոցեսում և կամ չի շահագործվում, ինչպես նաև այդ անշարժ գույքի ներսում գտնվող գույքին:
թ) պարբերական (կրկնվող) բնույթ ունեցող հողային (ստորգետնյա) ջրերի կամ ջրահավաքման ազդեցության հետևանքով կրած վնաս կամ կորուստ,
ժ) ստորգետնյա ջրերի մակարդակի բարձրանալու հետևանքով վնաս կամ կորուստ, որն իր հերթին ձնհալքի կամ հորդառատ անձրևների հետևանք է,
ի) տանիքից կամ պատերից ջրի (այդ թվում՝ ձնհալքի կամ անձրևների) ներխուժելու հետևանքով, եթե դա տանիքներից ջրահեռացման համար նախատեսված խողովակների կամ կոնստրուկցիաների բացակայության կամ նրանց խցանման հետևանք է ,
լ) հոսանքի, գազի, ջրի, ջերմության մատակարարման խափանման հետևանքով (անկախ խափանման պատճառներից) ապահովագրված գույքին պատճառված վնասը,
11.2. Անավարտ կամ կիսակառույց անշարժ գույքի՝ բնական աղետի հետևանքով վնասը և/կամ կորուստը չի համարվում ապահովագրական պատահար և ենթակա չէ հատուցման:
11.3. Եթե Վկայագրով այլ բան նախատեսված չէ, ապա ապահովագրական պատահար չեն համարվում այն իրադարձությունները, որոնք ուղղակի կամ անուղղակիորեն կապված են՝
ա) պատերազմի, զինված ներխուժման, թշնամաբար տրամադրված պետությունների գործողության (անկախ այն բանից, պատերազմ հայտարարված է, թե ոչ), քաղաքացիական պատերազմի, ապստամբության, հեղափոխության կամ խռովության հետ,
բ) գույքի բռնագրավման կամ ազգայնացման, ռեկվիզիցիայի, քանդման կամ կործանման հետ, որը տեղի է ունեցել պետական կառավարման մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների կարգադրությամբ,
գ) ահաբեկչական գործողությունների, պատանդներ բռնելու կամ դիվերսիայի հետ,
դ) գործադուլների, զանգվածային անկարգությունների կամ ժողովրդական հուզումների հետևանքով,
ե) Ապահովադրի, ի դեմս ղեկավարի (լիազորված անձի), իրավաբանական անձի այլ մարմնի (ղեկավարություն, տնօրինություն) դիտավորության հետ, ինչպես նաև այն անձանց, ովքեր թեկուզ և հանդես են գալիս իրենց անունից, բայց գործում են Ապահովադրի գիտությամբ և նրա հետաքրքրությունների օգտին,
զ) ցանկացած տիպի աղտոտվածության, քիմիական կամ այլ կենսաբանական նյութերի և հումքերի ներգործության հետ,
է) իոնացված ճառագայթման կամ ռադիոակտիվ նյութերի աղտոտմամբ՝ ցանկացած միջուկային վառելիքից կամ միջուկային վառելիքի այրումից ստացված միջուկային թափոններից, ռադիոակտիվ, թունավոր, պայթուցիկ կամ ցանկացած վտանգավոր նախադրյալներ պարունակող նյութերից և/կամ ցանկացած պայթուցիկ միջուկային ագրեգատից կամ դրանում առկա միջուկային բաղադրիչից,
ը) նախագծման, կառուցման, մոնտաժման սխալների, անորակ աշխատանքի կատարման կամ նյութերի թերությունների (պակասուրդի) հետ:
11.4. Ապահովագրողը նաև չի հատուցի ցանկացած կորուստ կամ վնաս, որը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ անշարժ և/կամ այլ գույքը օգտագործվել կամ շահագործվել է՝
11.4.1. այնպիսի նպատակներով, որոնք, ըստ տեխնիկական բնութագրի, չեն համապատասխանում տվյալ շինության/գույքի օգտագործման նշանակությանը,
11.4.2. գույքի արտադրողի (կառուցողի) կամ լիազորված մարմինների կողմից սահմանված տվյալ գույքի օգտագործման կամ շահագործման համար սահմանված կանոնների/նորմերի խախտմամբ,
11.5. Ապահովագրողը չի կրում հատուցման վճարման պարտավորություն՝
11.5.1. ապահովագրված տարածքում գտնվող, բայց Պայմանագրում չնշված գույքի համար,
11.5.2. մաշվածության և ամորտիզացիայի, աստիճանական վատթարացման և առկա թերությունների համար,
11.5.3. գույքի օգտագործման կամ շահագործման անհնարինության դեպքում, ներառյալ՝ գույքի ժամանակավոր փոխարինման ծախսերը,
11.5.4. մեխանիկական կամ էլեկտրական խափանումների, անսարքությունների կամ ջարդվածքների համար, որոնք հանդես չեն գալիս որպես ապահովագրական պատահարի հետևանք,
11.5.5. վերականգնումից կամ վերանորոգումից հետո գույքի շուկայական արժեքի կամ տեսքի ցանկացած նվազման համար,
11.5.6. գույքի և սարքավորումների անսարքության համար, որն օգտագործման կամ շահագործման պատճառ է,
11.5.7. վնասների և/կամ կորուստների համար, որոնք պատճառվել են մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը տեղի ունեցած պատահարների հետևանքով, նույնիսկ եթե այդ վնասը/կորուստը ի հայտ է եկել Պայմանագրի գործողության ընթացքում,
11.5.8. ապահովագրված գույքի վերանորոգման, վերակառուցման, տեխնիկական սպասարկման, փոխարինման, ձևափոխման կամ ընդարձակման ժամանակ և դրա հետևանքով պատճառված վնասների և/կամ կորուստի համար,

11.6. Ապահովագրական պատահար չեն համարվում նաև՝
11.6.1. եթե ապահովագրական պատահարը տեղի ունենալուց առաջ կամ հետո հայտնի դառնա, որ ապահովագրված շինությունը նախագծվել, կառուցվել և շահագործվել է թերություններով, որոնք կարող էին զգալիորեն ազդել շինության կայունության վրա, կամ հաշվի չեն առնվել տեղանքի սեյսմաերկրաբանական և այլ կարևոր պայմանները, ապա Ապահովագրողը կարող է մերժել ապահովագրական հատուցման պահանջը,
11.6.2. եթե ապահովագրված գույքը պատահարի վրա հասնելու ժամանակ գտնվել է բացօթյա տարածքում (նույնիսկ եթե այդ տարածքն ապահովագրված է), ապա ապահովագրական հատուցման պահանջը կարող է մերժվել բացառությամբ այն գույքի, սարքերի, սարքավորումների և համակարգերի, որոնք հատուկ նախատեսված են շինությունից դուրս շահագործելու համար,
11.6.3. բոլոր տեսակի պատահարների հետևանքով պատճառված կորուստի և/կամ վնասների համար, որոնք նախատեսված չեն սույն Պայմաններով, կամ որոնց առաջացման ռիսկը Ապահովադիրը չի ապահովագրել,
11.6.4. բոլոր տեսակի պատահարների հետևանքով պատճառված կորուստի և/կամ վնասների համար, որոնք ուղղակի կամ անուղղակի առաջացել են Ապահովադրի (Շահառուի) կողմից օրենսդրությանը հակասող գործողություններ իրականացնելու հետևանքով, նույնիսկ եթե առաջացած վնասները ապահովագրված են Վկայագրով,
11.7. Ապահովադիրը չի կրում պատասխանատվություն Ապահովադրի, Շահառուի կրած ֆինանսական և այլ կապակցված վնասների և/կամ կորուստների համար, այսինքն՝ կորցրած/չվաստակած եկամուտ, տույժեր, պարտադիր վճարումներ, ցանկացած պայմանագրով սահմանված պարտականությունների կատարման/չկատարման և/կամ թերի կատարման հետ կապված ծախսեր և այլն, նույնիսկ եթե դրանք ապահովագրական պատահարի հետևանք են:

12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ

12.1. Ապահովագրական գումարը Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ որոշված դրամական արտահայտությամբ գումար է, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում ապահովագրական պատահար տեղի ունենալու ժամանակ:
12.2. Ապահովագրական գումարը չի կարող գերազանցել գույքի իրական (շուկայական) արժեքը: Եթե Վկայագրով սահմանված ապահովագրական գումարը գերազանցում է գույքի իրական (շուկայական) արժեքը, ապա Վկայագիրն առոչինչ է ապահովագրական արժեքը գերազանցող գումարի մասով, և լրացուցիչ վճարված ապահովագրավճարը ենթակա չէ վերադարձման:
12.3. Եթե Վկայագրին համապատասխան ապահովագրավճարը մուծվում է տարաժամկետ ձևով և Պայմանների 12.2. կետում նշված պահի դրությամբ այն ամբողջությամբ վճարված չէ, ապա ապահովագրավճարի մյուս մասերը պետք է վճարվեն ապահովագրական գումարի նվազմանը համարժեք նվազեցումներով:
12.4. Եթե Պայմանների 12.2. կետում նշված իրադարձությունները հանդիսացել են Ապահովադրի խաբեության հետևանք, ապա Ապահովագրողն իրավունք ունի պահանջել Վկայագիրն անվավեր ճանաչել և չվերադարձնել վճարված ապահովագրավճարը:
12.5. Եթե Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը ցածր է գույքի իրական (շուկայական) արժեքից (ոչ լրիվ արժեքով ապահովագրություն), Ապահովագրողը կիրականացնի վնասի հատուցումն այն համամասնությամբ, որը գոյություն ունի ապահովագրական գումարի և գույքի իրական (շուկայական) արժեքի միջև (եթե Վկայագրով այլ բան նախատեսված չէ):
12.6. Ապահովագրական արժեք է համարվում ապահովագրության պայմանագրի կնքման պահին տվյալ գույքի իրական (շուկայական) արժեքը: Ապահովագրական արժեքի որոշման համար Ապահովագրողը կարող է հիմք ընդունել հետևյալ արժեքներից որևէ մեկը.
ա) Ապահովադրի հայտարարած արժեքը,
բ) գնահատող և/կամ փորձագիտական կազմակերպությունների կամ այդ ծառայությունները մատուցող լիզենզավորված/օրինական թույլտվություն ունեցող անձանց կողմից գնահատված արժեքը,
գ) ապահովագրված գույքի հաշվեկշռային մնացորդային արժեքը:
12.7. Գույքի ապահովագրական (իրական) արժեքը կարող է որոշվել նաև՝
12.7.1. Շենքի և շինության համար՝ դրա նախագծային բնութագրերին և շենքի (շինության) շինարարական նյութերի որակին համանման տվյալ տեղանքում շինարարության նախագծային արժեքով՝ նվազեցված դրա մաշվածքի տոկոսի չափով,
12.7.2 Տարածքի համար՝ ապահովագրված գույքի նշանակությամբ, տարածքով, նախագծմամբ, մաշվածությամբ և ֆիզիկական վիճակով համանման նույն տեղանքում (բնակավայրում, բնակավայրի շրջանում) գտնվող տարածքի շուկայական արժեքով,
12.7.3. Շենքի, շինության կամ տարածքի ներքին հարդարման համար՝ ծավալով և որակով ապահովագրված ներքին հարդարմանը համապատասխանող կրկնակի հարդարման աշխատանքներ

տանելու համար անհրաժեշտ ծախսերով (ներառյալ՝ նյութերի արժեքը)՝ մասհանելով մաշվածությունը (եթե այլ բան նախատեսված չէ Վկայագրով),
12.7.4. Մեքենայի և սարքավորման համար՝ նույն նշանակությամբ և տեխնիկական բնութագրերով համանման նոր մեքենա և սարքավորումներ ձեռք բերելու արժեքով (ներառյալ փոխադրման, մոնտաժի, մաքսային վճարների և տուրքերի վճարումը, այլ պարտադիր վճարումները)՝ նվազեցնելով դրանց մաշվածության արժեքը,
12.7.5. Կահույքի և ինվենտարի համար՝ համանման նոր առարկաների ձեռքբերման արժեքով՝ նվազեցնելով դրանց մաշվածության արժեքը,
12.7.6. Ապահովադրի կողմից արտադրվող ապրանքների (անավարտ արտադրության և պատրաստի արտադրանքի) համար՝ դրա կրկնակի արտադրության ծախսերով՝ ներառյալ՝ հումքի, կիսաֆաբրիկատների գնման և տրանսպորտային ծախսերը (ֆրախտ, բեռների ապահովագրության ծախսեր, մաքսային վճարներ և տուրքեր), սակայն ոչ բարձր դրանց վաճառքի գնից:
12.7.7. Ապահովադրի կողմից հետագայում վաճառելու նպատակով ձեռք բերված ապրանքների համար, Ապահովադրի կողմից գնված հումքի և նյութերի համար՝ համանման ապրանքներ ձեռք բերելու գնով՝ ներառյալ տրանսպորտային ծախսերը (ֆրախտ, բեռների ապահովագրության ծախսեր, մաքսային վճարներ և տուրքեր): Այն դեպքում, եթե ապրանքն արդեն վաճառված է (պատրաստի կամ անավարատ), ապա դրա ապահովագրական արժեքը ընդունվում է հավասար դրա շուկայական գնին՝ մասհանելով փաթեթավորման և փոխադրման վրա կատարված ծախսերը:
12.7.8 Արժեթղթերի համար՝ դրանց վերաթողարկման և տպագրության ծախսերի գումարով,
12.7.9. Տվյալների կրիչների, կառավարման էլեկտրոնային համակարգերի կամ ընդհանուր օգտագործման ծրագրերի համար՝ բացառությամբ դրանց մեջ եղած տվյալների՝ տվյալների վերականգման, ծրագրերի տեղադրման ծախսերի գումարով (բացառությամբ տվյալների վերականգնման ծախսերի):
12.8. Վկայագրով սահմանված ապահովագրական արժեքը հետագայում չի կարող վիճարկվել, բացառությամբ այն դեպքի, երբ մինչև պայմանագիր կնքելն ապահովագրական ռիսկը գնահատելու իր իրավունքից չօգտված Ապահովագրողն այդ արժեքի վերաբերյալ դիտավորյալ դրվել է մոլորության մեջ:
12.9. Եթե գույքը ապահովագրված է ոչ լրիվ արժեքով, կամ եթե Պայմանագրի գործողության ընթացքում տեղի է ունեցել գույքի արժեքի աճ, Ապահովադիրն իրավունք ունի լրացուցիչ ապահովագրավճար մուծելու միջոցով մեծացնել ապահովագրական գումարը: Տվյալ դեպքում Վկայագրի կողմերի միջև կնքվում է համաձայնագիր:
12.10. Ոչ լրիվ արժեքով ապահովագրության դեպքում, եթե պարզվի, որ ապահովագրական պատահար տեղի ունենալու օրվա դրությամբ ապահովագրական գումարը փոքր է ապահովագրական արժեքից, ապա Ապահովագրողն հատուցում է Ապահովադրին և/կամ Շահառուին իր կրած վնասի մի մասը՝ ապահովագրական պատահարը տեղի ունենալու օրվա դրությամբ ապահովագրական գումարի և ապահովագրական արժեքի հարաբերակցությանը համամասնորեն, եթե Կողմերը այլ բան չեն նախատեսել:
12.11. Եթե Վկայագրի գործողության ընթացքում ապահովագրված գույքի իրական արժեքը նվազում է, ապա Ապահովադիրն իրավունք ունի համապատասխան չափով նվազեցնել ապահովագրական գումարը և ապահովագրավճարը՝ մասհանելով Ապահովագրողի կրած ծախսերը այն օրվանից, երբ Ապահովադիրը գրավոր տեղեկացրել է Ապահովագրողին ապահովագրական գումարը նվազեցնելու անհրաժեշտության մասին:
12.12. Եթե Ապահովադրին վճարվել է ապահովագրական հատուցում, ապա համապատասխան ապահովագրական գումարը նվազում է վճարված ապահովագրական հատուցման չափով: Ապահովագրական գումարը համարվում է նվազեցված ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշում ընդունելու օրվանից սկսված:
12.13. Ապահովադիրն իրավունք ունի լրացուցիչ ապահովագրավճարի դիմաց վերականգնել նախնական ապահովագրական գումարը, հակառակ դեպքում հերթական ապահովագրական դեպքի ժամանակ կկիրառվի «Ոչ լրիվ արժեքով ապահովագրության դրույթը»:
12.14. Պայմանագրի գործողության ժամանակահատվածի ընթացքում վճարված հատուցումների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել Պայմանագրում նշված ապահովագրական գումարի չափը:
12.15. Կանխիկ փողերը, արժեթղթերը, փաստաթղթերը, խնայողական գրքույկները, ինչպես նաև Պայմանների 4.5. կետի զ և թ) ենթակետերում և 10.2-10.3. կետերում նշված ծախսերը համարվում են ապահովագրված «առաջին ռիսկի համար» սույն Պայմաններին համապատասխան:
12.16. Եթե Վկայագրով սահմանված է, ապա առանձին ունեցվածքը և/կամ ծախսերը կարող են ապահովագրվել «առաջին ռիսկի» պայմանով: Այդ դեպքում, ապահովագրված գույքի (ծախսերի) նկատմամբ ապահովագրական հատուցման գումար սահմանելիս հաշվի չի առնվում դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ ապահովագրական գումարի և ապահովագրական արժեքի

հարաբերակցությունը, և հատուցումը վճարվում է ամբողջ ծավալով՝ հաշվի առնելով չհատուցվող գումարի չափը:
12.17. Ի լրումն ապահովագրական գումարների՝ Վկայագրում կարող են սահմանվել Վկայագրի գործողության ընթացքում ապահովագրական հատուցման առավելագույն գումարներ (հատուցման ենթասահմանաչափեր) ապահովագրված գույքի, ապահովագրական ռիսկերի առանձին խմբերի, ապահովագրված ծախսերի, մեկ ապահովագրական պատահարի կամ Վկայագրի գործողության ընթացքում տեղի ունեցած բոլոր ապահովագրական պատահարների հանրագումարի համար:

13. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

13.1. Ապահովագրավճարն ապահովագրության համար նախատեսված գումար է, որն Ապահովադիրը Վկայագրի համաձայն պարտավոր է մուծել Ապահովագրողին:
13.2. Ապահովագրավճարը հաշվարկվում է՝ ելնելով ապահովագրական սակագնից (ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ), որը սահմանվում է՝ ելնելով գույքի տեսակից, բնութագրերից և այլ գործոններից, որոնք կարող են ազդել ապահովագրական պատահարի առաջացման և վնասի չափի մեծության վրա:
13.3. Վկայագրով սահմանված կարգով՝ Ապահովադիրն ապահովագրավճարը կարող է մուծել միանվագ կամ մաս-մաս, ինչպես կանխիկ տեսքով, այնպես էլ անկանխիկ:
13.4. Եթե Վկայագրով այլ բան նախատեսված չէ, ապա Ապահովադրի կողմից ապահովագրավճարի վճարման օր է համարվում՝
ա) կանխիկ վճարման դեպքում՝ Ապահովագրողի կամ նրա լիազորված անձի կողմից գումարի ստացման օրը,
բ) անկանխիկ վճարման դեպքում՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվին գումարի մուտքագրման օրը:
13.5. Եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև հերթական ապահովագրավճարի վճարումը, որը կետանցվել է, ապա ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցելու ամբողջ ապահովագրավճարի չափը:
13.6. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե Պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ ապահովագրավճարի տարաժամկետ վճարման հնարավորություն:
13.7. Եթե Ապահովադիրը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից հինգ օր (լրացուցիչ ժամկետ) հետո միակողմանի լուծելու Վկայագիրը՝ առանց այդ մասին Ապահովադրին ծանուցելու:
13.8. Եթե ապահովագրավճարի տարաժամկետ վճարման դեպքում Վկայագրով սահմանված ժամկետում հերթական ապահովագրավճարը չի վճարվել կամ վճարվել է Վկայագրով նախատեսվածից փոքր չափով, ապա նախատեսված ապահովագրությունը չի տարածվի այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Վկայագրով, որպես վճարման վերջին օր նախատեսված ամսաթվին հաջորդող օրվա 00 ժամ 00 րոպեից մինչև պարտավորության գումարի վճարման ամսաթվի 24 ժամ 00 րոպեն:
13.9. Եթե մինչև ապահովագրական պատահարի վրա հասնելը Ապահովադրի կողմից թույլ է տրվել ապահովագրավճարի վճարման կետանց, ապա Ապահովագրողն իրավունք ունի մերժելու ապահովագրական հատուցումը:

14. ԿՐԿՆԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

14.1. Ապահովադիրը պարտավոր է գրավոր կերպով տեղեկացնել Ապահովագրողին այլ ապահովագրողների հետ ապահովագրված գույքի նկատմամբ կնքված ապահովագրության բոլոր պայմանագրերի մասին: Միևնույն ժամանակ Ապահովադիրը պարտավոր է նշել այլ ապահովագրական ընկերությունների անվանումները, նրանց մոտ ապահովագրված գույքը, ապահովագրական ռիսկերը, ապահովագրական գումարների չափերը և գործող ապահովագրության ժամկետները:
14.2. Եթե Պայմանների համաձայն ապահովագրական հատուցման պահանջի ժամանակ գոյություն ունի այլ ապահովագրության պայմանագիր (վկայագիր), որով հատուցվում է նույն կորուստը և/կամ վնասը, ապա Ապահովագրողը պարտավոր չի լինի հատուցում տրամադրել, եթե ապահովագրական օբյեկտի վերաբերյալ առկա է նույն ռիսկերով ավելի վաղ կնքած ապահովագրության պայմանագիր:

15. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

15.1. Պայմանագրում կարող է սահմանվել չհատուցվող գումար (ապահովադրի մասնակցության չափ վնասի հատուցմանը), որն Ապահովագրողի և Ապահովադրի միջև համաձայնեցված գումար է կամ սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ:

15.2. Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական:
15.3. Պայմանագրում Պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողը ազատվում է ապահովագրական հատուցման պատասխանատվությունից, երբ ապահովագրական հատուցման գումարը չի գերազանցում Պայմանագրով սահմանված չհատուցվող գումարի չափը, և պարտավոր է վճարել ապահովագրական հատուցումն ամբողջությամբ, երբ ապահովագրական հատուցման գումարը գերազանցում է չհատուցվող գումարի չափը:
15.4. Պայմանագրում ոչ պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողը չհատուցվող գումարի չափով ազատվում է ապահովագրական հատուցում իրականացնելուց:

16. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

16.1. Պայմանագրի/Վկայագրի կնքման հիմք է ծառայում Ապահովադրի կողմից լրացված, Ապահովագրողի կողմից տրամադրած դիմում-հարցաթերթիկը կամ բանավոր հայտը:
16.2. Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է գրավոր ձևով, երկու օրինակից: Անհրաժեշտության դեպքում կարող է կնքվել ավել օրինակներից:
16.3. Պայմանագրին/Վկայագրին կից կարող են թողարկվել համաձայնագրեր կամ հավելվածներ, որոնք հանդիսանում են դրա անբաժանելի մասը:
16.4. Պայմանագրի/Վկայագրի կորստի, վնասվածքի կամ ոչնչացման դեպքում Ապահովագրողը Ապահովադրի դիմումով վերջինիս կտրամադրի Պայմանագրի/Վկայագրի կրկնօրինակը:
16.5. Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է մեկ տարի ժամկետով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:
16.6. Պայմանագիրը/Վկայագիրը գործում է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքներում, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:
16.7. Ապահովադիրը Ապահովագրողին պետք է հայտնի ապահովագրական պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ իրեն հայտնի հավանականության մասին:
16.8. Եթե Պայմանագրի/Վկայագրի կնքումից հետո պարզվել է, որ Ապահովադիրը սուտ տեղեկություններ է հայտնել ապահովագրական պատահարի ի հայտ գալու հավանականության որոշման համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին, ապա Ապահովագրողն իրավունք ունի Պայմանագիրը/Վկայագիրը համարել առոչինչ (անվավեր) և կիրառել ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված հետևանքները:
16.9. Պայմանագիր/Վկայագիր կնքելիս Ապահովագրողի պահանջով Ապահովադիրը պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝
ա) Իրավաբանական անձի դեպքում՝ կազմակերպության տվյալները, գույքի նկատմամբ իր շահի առկայությունը, անշարժ գույքի կամ հողամասի ապահովագրության դեպքում՝ սեփականության վկայականը, գույքի գնահատման ակտը (առկայության դեպքում), գույքագրման ցուցակները կամ ապահովագրության ենթակա գույքի ցուցակը՝ իրենց արժեքներով, գույքի գնման փաստաթղթերը (առկայության դեպքում),
բ) Ֆիզիկական անձի դեպքում՝ Ապահովավադրի անձնագիրը, անշարժ գույքի կամ հողամասի ապահովագրության դեպքում՝ սեփականության վկայականը, գույքի գնահատման ակտը (առկայության դեպքում), ապահովագրության ենթակա գույքի ցուցակը՝ իրենց արժեքներով, այլ փաստաթղթեր՝ ըստ Ապահովագրողի պահանջի:
16.10. Ապահովադրի կողմից դիմումում նշված ապահովագրության օբյեկտի վերաբերյալ տվյալները ընդունվում են որպես հանգամանքներ, որոնք էական նշանակություն ունեն ապահովագրական պատահար տեղի ունենալու հավանականության որոշման համար:
16.11. Վկայագիրը կնքելիս Ապահովադիրը պետք է Ապահովագրողին հայտնի գույքի վերաբերյալ իրեն հայտնի բոլոր այն հանգամանքների մասին, որոնք էական նշանակություն ունեն ռիսկի գնահատման համար:
16.12. Եթե Վկայագրի կնքումից հետո հաստատվի, որ Ապահովադիրը Ապահովագրողին նախապես հայտնել է կեղծ տեղեկություններ, ապա Ապահովագրողն իրավունք ունի Վկայագիրը համարել անվավեր և կիրառել օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված հետևանքները:
16.13. Մինչև Վկայագիր կնքելն Ապահովագրողն իրավունք ունի իրականացնելու գույքի զննում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում նշանակել փորձաքննություն գույքի իրական (շուկայական) արժեքը պարզելու համար:
16.14. Եթե Վկայագրով այլ բան նախատեսված չէ, ապա ապահովագրությունը տարածվում է միայն այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել՝
ա) որպես ապահովագրության ժամկետի սկիզբ նշված ամսաթվի հաջորդող օրվա 00 ժամ 00 րոպեից,
բ) մինչև Պայմանագրում նշված ապահովագրության ժամկետի ավարտի ամսաթվի 24 ժամ 00 րոպեն:

16.15. Եթե ապահովագրության գործողության ընթացքում ապահովագրված գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման իրավունքը փոխանցվում է այլ անձի, ապա այդ անձը պետք է անհապաղ, սակայն ոչ ուշ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնի Ապահովագրողին: Վկայագրով իրավունքները և պարտականությունները նոր սեփականատիրոջն են անցնում Ապահովագրողի համաձայնության դեպքում համաձայնագիր թողարկելու միջոցով: Եթե ապահովագրության օբյեկտի նկատմամբ իրավունքը փոխանցվել է այլ անձի, և այդ մասին սույն կետով նախատեսված ժամկետում և կարգով Ապահովագրողի համաձայնությունը ձեռք չի բերվել, ապա ապահովագրական պատահարի դեպքում ապահովագրական հատուցումը ենթակա է մերժման:
16.16. Վկայագրի կորստի դեպքում Ապահովագրողը երկու աշխատանքային օրվա ընթացքում Ապահովադրին է տրամադրում Վկայագրի կրկնօրինակը, իսկ Վկայագրի կորած օրինակը համարվում է անվավեր և դրանով ապահովագրական հատուցում չի կատարվում:
16.17.Սույն Պայմանների համաձայն գույքը կարող է ապահովագրվել ինչպես Պայմանների 5.3.1.-5.3.8 ենթակետերում նշված բոլոր դեպքերից, այնպես էլ առանձին դեպքով կամ դեպքերի խմբով, սակայն Պայմանների 5.3.5, 5.3.7. և 5.3.8 ենթակետերում նշված ապահովագրական ռիսկերը կարող են ներառվել Պայմանագրում միայն ի լրումն Պայմանների 5.3.1.-5.3.4., և 5.3.6. ենթակետերի: 5.3.5, 5.3.7. և 5.3.8. ենթակետերի ռիսկերով առանձին ապահովագրություն չի տրամադրվում, եթե Վկայագրով այլ բան նախատեսված չէ :
16.18. Ռիսկի կամ ծածկույթի գործողության համար անհրաժեշտ է, որ տվյալ ռիսկը/ծածկույթը ներառված լինի Վկայագրում:

17. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ

17.1. Պայմանագիրը վաղաժամկետ լուծվում է՝
ա) ապահովադրի, եթե իրավաբանական անձ է՝ լուծարման, իսկ եթե ֆիզիկական անձ է՝ մահվան դեպքում,
բ) պայմանագրից Ապահովադրի (Շահառուի) վաղաժամկետ հրաժարվելու դեպքում,
գ) պայմանագրով նախատեսված բոլոր պարտավորություններն Ապահովագրողի կողմից կատարելու, այդ թվում՝ ապահովագրական գումարը սպառվելու դեպքում,
դ) ապահովագրության օբյեկտի ամբողջական կորստի դեպքում,
ե) օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:
17.2. Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է գործել, եթե դրա գործողության մեջ մտնելուց հետո ապահովագրական պատահար տեղի ունենալու հավանականությունը վերացել է, և ապահովագրական ռիսկի գոյությունը ընդհատվել է ապահովագրական պատահարից զատ այլ հանգամանքով: Այս դեպքում Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի նկատմամբ՝ ապահովագրության գործած ժամանակահատվածին համամասնորեն:
17.3. Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին են վերադարձվում ապահովագրավճարներն ամբողջությամբ, բացառությամբ Պայմանների 17.4 կետով նախատեսված դեպքի:
17.4. Պայմանագիրը կարող է Ապահովագրողի պահանջով վաղաժամկետ լուծվել՝ Ապահովադրի կողմից օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմաններով կամ Վկայագրով նախատեսված իր պարտականությունները չկատարելու դեպքում, որի ժամանակ Ապահովադրին է վերադարձվում ապահովագրավճարը՝ Վկայագրի չլրացած ժամկետին համամասնորեն:
17.5. Ապահովադիրն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Վկայագիրը՝ այդ մասին ոչ պակաս, քան 15 օր առաջ ծանուցելով Ապահովագրողին, եթե այլ ժամկետ նախատեսված չէ Վկայագրով:
17.6. Ապահովադրի կողմից Վկայագրից վաղաժամկետ հրաժարվելու դեպքում՝ վերջինիս վերադարձվում է մուծված ապահովագրավճարը՝ նվազեցնելով այն որոշակի տոկոսի չափով՝ համաձայն ստորև բերված կարճաժամկետ ապահովագրավճարների վերադարձման աղյուսակի՝

Վկայագրի գործած ժամանակահատված (ամիս*)	**Վերադարձման ենթակա ապահովագրավճար**
1 ամիս	75%
2 ամիս	70%
3 ամիս	60%

4 ամիս	50%
5 ամիս	40%
6 ամիս	30%
7 ամիս	20%
8 ամիս	15%
9 ամիս	10%
10-12 ամիս	0%

*Սույն կետի իմաստով՝ ամսվա մեջ 16 և ավելի օրերը դիտարկվում են որպես մեկ ամիս:

17.7. Այն դեպքում, երբ Ապահովադրի կողմից Վկայագրի վաղաժամկետ լուծման պահանջը պայմանավորված է Ապահովագրողի կողմից Վկայագրի պայմանների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադրին է վերադարձնում վճարված ապահովագրավճարը՝ Վկայագրի չլրացած ժամկետին համամասնորեն:
17.8. Վկայագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին չեն վերադարձվում ապահովագրավճարները, եթե Ապահովադիրը տվյալ Վկայագրի գծով անկախ հատուցման գումարի չափից դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար կամ ստացել է այն (բացառությամբ այն դեպքի, երբ ապահովագրական հատուցումը մերժվել է և Ապահովադիրը (Շահառուն) համաձայնվել է Ապահովագրողի կողմից տրամադրված մերժման վերաբերյալ եզրակացության հետ):
17.9. Ապահովագրողի լուծարման դեպքում վերջինս պարտավոր է Ապահովադրին վերադարձնել Պայմանագրի չլրացած ժամկետի համար մուծված ապահովագրավճարը:

18. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

18.1. Գույքը համարվում է ապահովագրված միայն ապահովագրության տարածքում գտնվելու ժամանակահատվածում: Ապահովագրության տարածք է համարվում Պայմանագրում նշված տարածքը: Ընդ որում՝ ապահովագրված գույքի տարբեր խմբերի և տարբեր ռիսկերի նկատմամբ կարող են սահմանվել առանձին ապահովագրության տարածքներ: Եթե մեկ Ապահովադրի շարժական գույքը ապահովագրված է տարբեր տարածքներում/հասցեներում, ապա յուրաքանչյուր գույքի համար Վկայագրում նշված տարածքը համարվում է ապահովագրության տարածք հենց այդ գույքի համար: Եթե հետագայում՝ Վկայագրի գործողության ընթացքում, Ապահովադիրը տեղափոխում է այդ գույքը կամ նրա մի մասը այլ ապահովագրության տարածք կամ նոր տարածք, որը նշված չէ Վկայագրում, ապա նա պարտավոր է մինչև տեղափոխումը սկսելը, սակայն ոչ ուշ քան տեղափոխման ավարտը, հայտնել այդ մասին Ապահովագրողին, հակառակ դեպքում հնարավոր ապահովագրական հայցը նշված տեղափոխված և վնասված/կորած գույքի համար կարող է մերժվել: Ապահովագրված գույքն ամբողջությամբ կամ նրա մի մասը այլ ապահովագրության տարածք տեղափոխելու դեպքում կթողարկվի համաձայնագիր:
18.2. Ապահովագրության տարածք է համարվում Պայմանագրում նշված՝
ա) շենքի, շինության կամ բաց ցանկապատված տարածությունում գտնվող ապրանքների համար՝ հողակտորի տարածքը, որի վրա տեղակայված է Ապահովադրի գույքային համալիրը,
բ) շինարարական և գյուղատնտեսական սարքավորումների համար՝ շինարարության տարածքը կամ մեկ բնակավայրի շրջանակներում շահագործման այլ տարածք,
գ) այլ շարժական գույքի համար՝ շենքի կամ տարածքի տարածությունը և/կամ Վկայագրում նշված այլ տարածք կամ աշխարհագրական/վարչական միավոր:
18.3. Ապահովագրությունը գործում է նաև այն դեպքում, երբ գույքը տեղափոխվում է ապահովագրության տարածքից ապահովագրական պատահարի պատճառով կամ հնարավոր վնասները և/կամ կորուստները կանխելու նպատակով:
18.4. Կողմերի համաձայնությամբ՝ Վկայագրով կարող է նախատեսվել գույքի առանձին խմբերի ապահովագրություն (մասնավորապես՝ տեղափոխվող գույքի կամ շարժական սարքավորումների) այն շենքի (շինության) կամ հողակտորի տարածքից դուրս, որի վրա տեղակայված է Ապահովադրի հիմնական գույքը: Այդ դեպքում, եթե Վկայագրով այլ բան նախատեսված չէ, ապա ապահովագրության տարածք է համարվում Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքը:
18.5. Եթե ապահովագրված գույքը կամ նրա մի մասը դուրս է բերվում ապահովագրության տարածքից, ապա այդ գույքի մասով ապահովագրական ծածկույթը չի գործում մինչև նշված գույքն ապահովագրության տարածք վերադարձնելը կամ նոր ապահովագրության տարածք տեղափոխելը, եթե այլ բան սահմանված չէ Վկայագրով:

19. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

19.1. Վկայագրի գործողության ընթացքում Ապահովադիրը պարտավոր է անհապաղ, սակայն ոչ ուշ քան 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ պահել Ապահովագրողին իրեն հայտնի էական փոփոխությունների և այլ հանգամանքների մասին, որոնք էապես կարող են ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա:
19.2. Բոլոր դեպքերում էական են համարվում՝
ա) ապահովագրության տարածքում իրականացվող տնտեսական գործունեության փոփոխությունը և կամ ապահովագրված անշարժ գույքի օգտագործման նպատակային նշանակության փոփոխությունը,
բ) ապահովագրված գույքի փոխանցումը վարձակալության կամ լիզինգի,
գ) ապահովագրության տարածքում կամ շենքում (շինությունում), որտեղ գտնվում է ապահովագրված գույքը, շինարարական և մոնտաժային աշխատանքների (տեղահանում, վերակառուցում, կապիտալ վերանորոգում կամ շենքի և շինության, սարքավորման նորացում) իրականացումը,
դ) պահեստավորված ապահովագրված ապրանքների տեսականու փոփոխությունը,
ե) ապահովագրված գույքի հսկողության և պահպանման պայմանների, ինչպես նաև անվտանգության և պաշտպանության այլ միջոցների և համակարգերի ցանկացած փոփոխությունը,
զ) ապահովագրված տարածքի և/կամ այն տարածքի, ուր գտնվում է ապահովագրված գույքը, բանալիների կորուստը:
19.3. Այն դեպքում, երբ Ապահովադիրը Պայմանների սույն բաժնով սահմանված կարգով և ժամկետում չի հայտնել ապահովագրական ռիսկի աստիճանի էական փոփոխության (մեծացման) մասին, Ապահովագրողն իրավունք ունի՝
- վաղաժամկետ լուծելու Վկայագիրը՝ համաձայն օրենքի, այլ իրավական ակտերի և Պայմանների, կամ
- պահանջելու Վկայագրի վաղաժամկետ դադարեցման հետ կապված վնասների հատուցում՝ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան, կամ
- ապահովագրական պատահարի դեպքում մերժել հատուցումը, եթե ապահովագրական պատահարի տեղի ունենալը գտնվում է ուղղակի պատճառահետևանքային կապի մեջ ռիսկի աստիճանի փոփոխության հետ:
19.4. Ապահովագրողն ապահովագրական ռիսկի աստիճանի փոփոխության մասին տեղեկանալուց հետո կարող է պահանջել փոփոխել ապահովագրության պայմանները կամ սահմանել լրացուցիչ ապահովագրավճար: Եթե Ապահովադիրը հրաժարվում է ապահովագրության պայմանների փոփոխումից կամ լրացուցիչ ապահովագրավճար վճարելուց, ապա Ապահովագրողն իրավունք ունի վաղաժամկետ լուծելու Վկայագիրը՝ համաձայն օրենսդրության, այլ իրավական ակտերի և Պայմանների:
19.5. Ապահովագրողը չի կարող վաղաժամկետ լուծել Վկայագիրը, եթե ռիսկի աստիճանի մեծանալու վտանգը վերացած է:

20.ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ

20.1. Ապահովադիրը պարտավոր է՝
20.1.1. պահպանել օրենքով, այլ իրավական ակտերով և/կամ Պայմաններով նախատեսված անվտանգության բոլոր միջոցառումները, կանոնները և նորմերը: Թույլատրվում են անվտանգության կանոններից շեղումներ, եթե վերջիններս հաստատվել են պետական հսկողություն իրականացնող մարմինների կողմից,
20.1.2. պահպանել ապահովագրված գույքը սարքին վիճակում, հատկապես ջրամատակարարման, ջեռուցման, սառեցման, կոյուղու համակարգերի հետ միացված սարքավորումները և մեքենաները, տանիքները և շենքի արտաքին կողմից տեղադրված սարքավորումները, անմիջապես վերանորոգել դրանք վնասվելու դեպքում,
20.1.3. արտադրողի սահմանած կանոններին և ցուցումներին համապատասխան ապահովել սարքերի, սարքավորումների և մեքենաների շահագործման Պայմանները և տվյալների պահպանման միջոցառումները:
20.1.4. ապահովագրված գույքը (բացառությամբ կահույքի կամ այն գույքի, որը նախատեսված է միայն գետնի/հատակի վրա տեղադրման կամ պահպանման համար) պահպանել և/կամ պահեստավորել ոչ պակաս քան գետնից 20 սմ կամ Ապահովագրողի հետ համաձայնեցված այլ բարձրության վրա: Նշված պայմանը չկատարելու դեպքում ջրի ազդեցության հետևանքով կրած վնասի համար ներկայացված հատուցման պահանջը կարող է մերժվել:
20.1.5. Ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու և նման համակարգերից, ցայտաջրմուղային համակարգի և ջրաքաշ խողովակի ջրի պատճառած վնասներից ապահովագրության դեպքում՝
ա) առնվազն ամիսը մեկ անգամ իրականացնել շրջայցեր չօգտագործվող կամ փակ տարածություններ և անհրաժեշտության դեպքում տարվա ցուրտ եղանակներին, ազատել ջրից

(դատարկել ջուրը խողովակներից և տարաներից) այդ տարածություններում գտնվող բոլոր ջրատար կառույցները և սարքավորումները,
բ) տարվա ցուրտ եղանակներին անհրաժեշտ չափով ջեռուցել ապահովագրված անշարժ գույքը և/կամ այն տարածքները, ուր գտնվում է ապահովագրված գույքը, իսկ անհնարինության դեպքում ազատել ջրից (դատարկել ջուրը խողովակներից և տարաներից) այդ տարածություններում գտնվող բոլոր ջրատար կառույցները և սարքավորումները:
20.2. «Կոտրելու միջոցով կողոպուտ» ռիսկից ապահովագրության դեպքում Ապահովադիրը պարտավոր է ոչ աշխատանքային ժամերին անհրաժեշտ ձևով փակել մուտքի դռները, այլ անցքերը և որմնախորշերը: Եթե Ապահովադրին պատկանում է ապահովագրական տարածության կամ պահեստարանների միայն մի մասը, ապա սույն ենթակետով սահմանված դրույթը տարածվում է միայն այդպիսի տարածությունների (պահեստարանների) վրա:
20.3. Ապահովադրի կողմից հայտարարված և Վկայագրում նշված հակակողոպուտային և հրդեհային պաշտպանության միջոցների և/կամ համակարգերի նկատմամբ պետք է իրականացվեն հետևյալ պահանջները՝
ա) ապահովագրության տարածքի շուրջօրյա պաշտպանություն (հնարավորության դեպքում), որը պետք է իրականացվի շաբաթը 7 օր, օրը 24 ժամ,
բ) պահպանության, հրդեհային ազդանշանային, հրդեհի մարման համակարգերը (կրակմարիչներ, ցայտաջրմուղներ, ջրաքաշեր և այլն), որոնք առկա են ապահովագրության տարածքում, կամ որոնց պաշտպանության տակ է գտնվում ապահովագրված գույքը, պետք է մշտապես լինեն միացված և աշխատանքային վիճակում և, համաձայն արտադրողի կամ այլ նորմերի, պետք է ժամանակ առ ժամանակ փորձարկվեն, ժամանակին միանան կամ մշտապես միացված լինեն՝ կախված դրանց օգտագործման ռեժիմից: Պահպանության և հրդեհային ազդանշանների վահանակները պետք է մշտապես հսկվեն:
գ) անվտանգության համակարգը և/կամ նրա մի մասը շարքից դուրս գալու և/կամ վերանորոգման աշխատանքներ անցկացնելու դեպքում այն սկսելուց 1 (մեկ) օր առաջ Ապահովադիրը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին:
Եթե ապահովագրական պատահարի պահի դրությամբ պարզվի, որ նշված համակարգերը առկա չեն եղել կամ չեն գտնվել աշխատանքային վիճակում և/կամ գտնվել են վերանորոգման մեջ կամ ցանկացած պատճառով եղել են անջատված կամ չեն գտնվել իրենց նախատեսված վայրերում (ինչի մասին Ապահովագրողը պետք է ժամանակին տեղեկացված լիներ), ապա Ապահովագրողն իրավունք ունի մերժելու ներկայացված ապահովագրական հայցը:
20.4. Ապրանքային պաշարների, շարժական գույքի և նմանատիպ այլ գույքի ապահովագրության դեպքում Ապահովադիրը պարտավոր է իրականացնել պահեստում (առևտրային սրահում, գրասենյակում և այլ վայրում) եղած ապրանքների հաշվառում: Հաշվառման փաստաթղթերը (կրկնօրինակները) պետք է գտնվեն/պահպանվեն ապահովագրության տարածքից դուրս կամ առկա լինեն որևէ կրիչի վրա: Ապահովագրական պատահարի վրա հասնելու դեպքում Ապահովագրողին պետք է ներկայացվեն ապրանքների առկայության և շարժի մասին հաշվառման համապատասխան տվյալները: Այդ տվյալները չներկայացնելը Ապահովագրողին իրավունք է տալիս մերժել ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված վնասի ապահովագրական հատուցումը:
20.5. Սույն գլխի պահանջները չիրականացնելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի մերժելու ապահովագրական հատուցումը:

21. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

21.1. **Ապահովադիրն իրավունք ունի՝**
21.1.1. կնքել ապահովագրության Վկայագիր,
21.1.2. դիմել Վկայագրի պայմանների փոփոխման և/կամ լրացման համար,
21.1.3. սահմանված կարգով վաղաժամկետ լուծել Վկայագիրը,
21.1.4. օգտվել Ապահովագրողի կողմից սահմանված զեղչերից,
21.1.5. ստանալ ապահովագրական հատուցում սույն Պայմաններով և Վկայագրով սահմանված կարգով,
21.1.6. ստանալ Վկայագրի կրկնօրինակը կամ Ապահովագրողի կողմից հաստատված պատճենը՝ բնօրինակը կորցնելու կամ վնասվելու դեպքում:
21.2. **Ապահովադիրը պարտավոր է՝**
21.2.1. կատարել սույն Պայմաններով և Վկայագրով սահմանված դրույթները,
21.2.2. Վկայագիր կնքելիս Ապահովագրողին տալ անհրաժեշտ տեղեկություններ ապահովագրության օբյեկտի(ների) մասին, նաև հայտնել Ապահովագրողին իրեն հայտնի այն տեղեկությունները, որոնք կարող են զգալիորեն ազդել ռիսկայնության և ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության գնահատման վրա,

21.2.3. կատարել ապահովագրավճարի վճարում՝ Վկայագրով սահմանված չափով, կարգով և ժամկետներում,
21.2.4. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրված գույքի օտարման դեպքում հնարավոր որևէ միջոցով (հեռախոս, ֆաքս, էլ. փոստ) 24 ժամվա ընթացքում այդ մասին հայտնել, իսկ այնուհետև՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, գրավոր տեղեկացնել Ապահովագրողին,
21.2.5. պատշաճ կերպով շահագործել գույքն ու ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման և այլ համակարգերը, ժամանակին անցկացնել դրանց տեխնիկական սպասարկումն ու վերանորոգումը,
21.2.6. ձեռնարկել անհրաժեշտ ողջամիտ քայլեր ապահովագրված գույքը ցանկացած կորստից կամ վնասից զերծ պահելու համար,
21.2.7. Ապահովագրողին փոխանցել և տրամադրել բոլոր ունեցած փաստաթղթերն ու տեղեկությունները, պատահարի հետևանքով առաջացած վնասի հատուցումն իրականացնելու համար հնարավորության դեպքում օժանդակել Ապահովագրողին:
21.2.8. ծանոթացնել Շահառուին և գույքն օգտագործող/շահագործող անձանց սույն Պայմանների և Վկայագրի դրույթներին:
21..3. Ապահովագրողն իրավունք ունի՝
21.3.1. մերժել կամ նվազեցնել ապահովագրական հատուցումը, եթե Վկայագրի գործողության ընթացքում Ապահովադիրը խախտել է Վկայագրի և սույն Պայմանների դրույթներն ու պայմանները,
21.3.2. ստուգել ապահովագրվող օբյեկտի վերաբերյալ Ապահովադրի կողմից ներկայացված տեղեկությունները,
21.3.3. անհրաժեշտության դեպքում Վկայագրի գործողության ընթացքում ստուգել ապահովագրված գույքի վիճակն ու շահագործման պայմանները,
21.3.4. վաղաժամկետ միակողմանի լուծել Վկայագիրը, եթե Վկայագրի գործողության ընթացքում Ապահովադրը Ապահովագրողին տրամադրել է թերի կամ կեղծ տեղեկություններ, իրականացրել է խարդախություն՝ կապված ապահովագրական հատուցում ստանալու հետ,
21.3.5. Ապահովադրից պահանջել և ստանալ ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը հաստատելու և ապահովագրական հատուցման չափը որոշելու համար անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր,
21.3.6. ինքնուրույն կամ այլ անձանց ներգրավելով՝ աշխատանքներ տանել ապահովագրական պատահարի պատճառները և հանգամանքները բացահայտելու, ապահովագրական հատուցման չափը որոշելու համար, անհրաժեշտության դեպքում իրավապահ կամ այլ լիազորված մարմիններին հարցումներ կատարել ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը և պատճառները հաստատելու և ապահովագրական հատուցման չափը որոշելու համար,
21.3.7. մերժել Ապահովադրի կողմից տրված դիմումը Վկայագրի վերակնքման կամ փոփոխման/լրացման վերաբերյալ՝ դրա հետևանքով ապահովագրության ռիսկայնությունը զգալիորեն մեծանալու կամ այլ հիմնավոր պատճառներով,
21.3.8. ապահովագրական հատուցում տալու դեպքում Ապահովադրից պահանջել իրեն փոխանցել ապահովագրական պատահարի հետևանքով վնասված գույքի վերականգման, վերանորոգման ընթացքում փոխարինված բաղադրիչները, մասերը, դետալները և ագրեգատները,
21.3.9. հետաձգել ապահովագրական հատուցում վճարելու վերաբերյալ որոշում կայացնելու ժամկետը մինչև դեպքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունների ճշտելը, այդ թվում՝ մինչև լիազորված մարմիններից իրենց ուղարկված հարցումների պատասխանները ստանալը, իսկ եթե պատճառված վնասի առնչությամբ հարուցվել է քրեական վարույթ, ապա մինչև տվյալ վարույթի կարճման մասին որոշման կամ վերջնական օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կայացումը:
21.4. Ապահովագրողը պարտավոր է՝
21.4.1. ծանոթացնել Ապահովադրին սույն Պայմաններին և տալ Վկայագրի և Պայմանների մեկական օրինակ,
21.4.2. պահպանել և կատարել սույն Պայմաններով ու Վկայագրով սահմանված պայմաններն ու դրույթները,
21.4.3. Ապահովադրից ստանալ տեղեկություններ և փաստաթղթեր, ուսումնասիրել դրանք սույն Պայմաններին համապատասխան, իսկ Ապահովադրի կողմից Վկայագրում զգալի փոփոխություն և/կամ լրացում կատարելու մասին գրավոր դիմում ստանալու դեպքում ուսումնասիրել այն և որոշում ընդունել երեք աշխատանքային օրվա ընթացքում:
21.5. Կողմերը պարտավորվում են չհրապարակել, չբացահայտել կամ այլ կերպ երրորդ անձանց չտրամադրել Վկայագրի կատարման կապակցությամբ միմյանց հայտնի դարձած առևտրային, ֆինանսական և ապահովագրական գաղտնիք հանդիսացող և/կամ պարունակող բոլոր տեսակի տեղեկությունները (այսուհետ՝ Գաղտնի տեղեկություններ), բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, չօգտագործել Գաղտնի տեղեկությունները սեփական և/կամ երրորդ անձանց շահերին, ինչպես նաև միմյանց տնտեսական դիրքին վնաս հասցնելու համար:

22. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22.1. Ապահովագրական պատահարի կամ ցանկացած այլ դեպքի, որը կարող է հետագայում հանգեցնել ապահովագրական պատահարի, տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը պարտավոր է տեղի ունեցած պատահարի մասին անհապաղ, ցանկացած հասանելի և տեղեկացման փաստը հավաստող եղանակով (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային նամակ, կարճ բջջային հաղորդագրություն և այլն) տեղեկացնել Ապահովագրողին (նրա ներկայացուցչին) Վկայագրում նշված կոնտակտային տվյալներով՝ հեռախոսահամարներով, իսկ պատահարը տեղի ունենալուց հետո ոչ ուշ, քան 2 աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գրավոր հայտնել Ապահովագրողին ՝ ներկայացնելով հայցային դիմում:

22.2. Եթե Ապահովադիրն Ապահովագրողին չի հայտնել ապահովագրական պատահարի մասին Կանոնների 23.1 կետում և/կամ Վկայագրում նշված կարգով և/կամ ժամկետներում, ապա Ապահովագրողն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցումը, եթե չապացուցվի, որ Ապահովագրողը ժամանակին իմացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա:

22.3. Այն բանից հետո, երբ Ապահովադրին հայտնի է դառնում որևէ իրադարձության տեղի ունենալու մասին, որը կարող է Ապահովագրողին դիմելու համար հիմք հանդիսանալ, Ապահովադիրը (նրա ներկայացուցիչը կամ Շահառուն) պարտավոր է՝

22. 3.1. անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել վնասի կանխման կամ նվազեցման ուղղությամբ,

22.3.2. պատահարի մասին անմիջապես հայտնել համապատասխան լիազորված մարմնին,

22.3.3. հրդեհի և/կամ պայթյունի դեպքերում հայտնել Ոստիկանությանը, հրշեջ և/կամ վթարային ծառայության համապատասխան մարմիններին, փրկարար ծառայություններին, գազի վթարային ծառայությանը,

22.3.4. ջրի վնասի դեպքում հայտնել համապատասխան վթարային ծառայությանը, փրկարար ծառայություններին և/կամ տեղական ինքնակառավարման մարմնին, համատիրությանը,

22.3.5. բնական աղետների դեպքում՝ փրկարար ծառայություններին, տեղական ինքնակառավարման մարմիներին, համատիրությանը և այլ լիազորված մարմիններին՝ ելնելով իրավիճակից և վնասի բնույթից,

22.3.6. մեխանիկական ազդեցության դեպքում՝ ոստիկանությանը և/կամ փրկարար ծառայությանը, տեղական ինքնակառավարման մարմնին, համատիրությանը,

22.3.7. ապակիների կոտրանքի դեպքում՝ համատիրությանը, տեղական ինքնակառավարման մարմնին,

22.3.8. հափշտակության և երրորդ անձանց հակաօրինական բոլոր գործողությունների դեպքում՝ Ոստիկանությանը,

22.3.9. հոսանքի ազդեցության դեպքում՝ էլեկտրոցանցին/էլեկտրական հոսանք մատակարարող կազմակերպությանը, համատիրությանը կամ ինքնակառավարման մարմնին,

22.3.10. ուղղակի ֆիզիկական վնասի դեպքում՝ փրկարար ծառայությանը կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ համատիրությանը,

22.3.11. հողամասերի ապահովագրության դեպքում՝ պետական հիգիենիկ եւ համաճարակային հսկողությանը և/կամ ոստիկանությանը կամ այլ իրավասու մարմիններին, համատիրությանը, տեղական ինքնակառավարման մարմնին,

22.4. Այս կամ այն ծառայության դիմելու ընտրությունը կախված է պատահարի բնույթից և համապատասխանությունից: Ապահովադիրը կարող է դիմել Ապահովագրողի օգնությանը վերը նշված ծառայություններից մեկը ընտրելու հարցում: Ապահովագրողն իրավունք ունի նաև իր հայեցողությամբ վնասի պատճառը և/կամ չափը պարզելու նպատակով իրականացնել համապատասխան փորձաքննություն կամ դրա իրականացումը հանձարարել անկախ փորձագետի:

22.5. Ապահովադիրը պարտավոր է՝

ա) մինչև Ապահովագրողի ներկայացուցիչների, ոստիկանության աշխատակիցների կամ այլ լիազորված մարմինների դեպքի վայր ժամանելը՝ հավաքել մատչելի նախնական տեղեկատվություն վնասի առաջացման պատճառների և հանգամանքների վերաբերյալ (օրինակ՝ կազմել կամայական ձևով ակտ՝ տեղական, այլ պաշտոնական մարմինների, ինչպես նաև տեղի ունեցած դեպքի ականատեսների (վկաների) մասնակցությամբ), հնարավորինս ամրագրել վնասի պատկերը լուսանկարահանման, տեսաձայնանկարահանման կամ կինոնկարահանման միջոցով և փոխանցել այն Ապահովագրողին՝ վնասի չափը և պատճառը հետագայում ավելի ճշգրիտ որոշելու նպատակով,

բ) պահպանել վնասված գույքը և դեպքի պատկերը անփոփոխ վիճակում և ներկայացնել այն Ապահովագրողի ներկայացուցչին՝ զննելու և/կամ սահմանված ձևով ակտ կազմելու համար, բացառությամբ այն դեպքի, երբ վնասի պատկերի փոփոխումը թելադրվում է անվտանգության կանոններով՝ ըստ լիազորված մարմնի ներկայացուցչի հրահանգի (նվազեցնելու վնասի չափերը),

գ) Ապահովագրողին հնարավորություն տալ անցկացնել վնասված ապահովագրված գույքի և դեպքի պատկերի զննում կամ դիտարկում, վնասի պատճառների և չափերի քննում,
դ) տրամադրել Ապահովագրողի կողմից պահանջվող այլ տեղեկություններ և փաստաթղթեր,
ե) կատարել օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմաններով և Վկայագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:
22.6. Սույն գլխի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Ապահովագրողը իրավունք ունի մերժելու ապահովագրական հատուցումը:

23.ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

23.1.Դեպքի պատճառը և հանգամանքները հաստատող փաստաթղթեր՝

23.1.1. Ապահովագրական հատուցում ստանալու նպատակով Ապահովադիրը և կամ Շահառուն պետք է ներկայացնի Ապահովագրողին հետևյալ փաստաթղթերը՝
ա) հրդեհի հետևանքով վնասների առաջացման դեպքում՝ վարույթ իրականացնող մարմնի կողմից տրված տեղեկանք, որում պետք է նշվեն հրդեհի առաջացման պատճառները, հանգամանքները, իսկ քրեական գործ հարուցված լինելու դեպքում՝ այդ որոշման պատճենը կամ հարուցված քրեական վարույթի ավարտի վերաբերյալ համապատասխան որոշման պատճենը,
բ) բնական աղետների, ինչպես նաև կայծակնահարության հետևանքով վնասների առաջացման դեպքում՝ տեղեկանք օդերևութաբանական ծառայությունից՝ բնական իրադարձությունների նկարագրությամբ՝ դեպքի տեղի ունենալու վայրի և ամսաթվի վերաբերյալ (փոթորիկի և երկրաշարժի դեպքում տեղեկանքը պետք է պարունակի տվյալներ օդային զանգվածների տեղաշարժման և/կամ երկրաշարժի արագության և ուժգնության մասին),
գ) ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու և նման համակարգերից, ցայտաջրմուղային և ջրաքաշ համակարգերից ջրի հասցրած վնասների դեպքում՝ ջրամատակարարման և այլ նմանատիպ ցանցեր շահագործող մասնագիտացված ծառայությունների կողմից տրված ակտ կամ տեղեկանք, որը բնութագրում է տվյալ համակարգերի շարքից դուրս գալու պատճառները և հնարավոր մեղավոր կողմին,
դ) պայթյունի հետևանքով վնասների դեպքում՝ լեռպետտեխհսկողությունից կամ ուժային ագրեգատների (գազատար ցանցերի) պայմանների նկատմամբ դիտարկում իրականացնող այլ պետական ծառայություններից տեղեկանքներ կամ ակտեր վնասի պատճառների մասին՝ նշելով տեխնիկական թերությունները, շահագործման նորմաների խախտման մեջ մեղավոր անձանց,
ե) հափշտակության՝ կողոպուտի, գողության, ավազակության կամ երրորդ անձանց այլ անօրինական գործողությունների դեպքում՝
ե-ա) տեղի ունեցածի մասին Ոստիկանությանը ներկայացված Ապահովադրի դիմումի պատճենը և դրա հիման վրա Ոստիկանության կողմից տրված կտրոն՝ դիմումը ընդունելու վերաբերյալ,
ե-բ) քրեական գործի հարուցման (կամ դրա հարուցումը մերժելու) մասին որոշման պատճենը,
ե-գ) ապահովագրված շինությունների և այլ գույքի՝ կողմնակի կազմակերպության ուժերով պահպանություն իրականացնելու դեպքում՝ պահպանություն իրականացնող ընկերության կամ արտագերատեսչական պահպանություն իրականացնողների հետ կնքված պայմանագրի պատճենը,
ե-դ) պահպանության ազդանշանային համակարգի առկայության դեպքում՝ ազդանշանային համակարգի աշխատելու վերաբերյալ փաստաթղթերը, ազդանշանը պահպանող ձեռնարկության վահանակի վրա ստացման կամ արտագերատեսչական պահպանության և օպերատիվ խմբի մեկնումը դեպքի վայր հաստատող փաստաթղթերը,
զ) պահպանությանն ուղղված գործողությունների վերաբերյալ պահպանությունն իրականացնող ձեռնարկության ծառայողական փաստաթղթերի պատճենը,
է). տրանսպորտային միջոցով վրաերթ կատարելու կամ այլ բախումներից առաջացած վնասների դեպքում՝
է-ա) համապատասխան եզրակացություն կամ որոշում ճանապարհային ոստիկանությունից կամ դեպքի քննությունն իրականացնող համապատասխան մարմնից,
է-բ) Ապահովադրի մոտ առկա այն կազմակերպության կամ ֆիզիկական անձի տվյալներ պարունակող փաստաթղթերի պատճենը, որոնց տրանսպորտային միջոցը մասնակից է պատահարին:
23.2. Բոլոր դեպքերում Ապահովադիրը պարտավոր է ներկայացնել ներքին ծառայողական փաստաթղթերի պատճենը, (այսինքն՝ ցանկացած ակտ, արձանագրություն, բացատրագիր, ծառայողական գրություն, զեկուցագիր և նման փաստաթուղթ), որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են ուսումնասիրվող վնասերի հետ:
23.3. Բոլոր այն դեպքերում, երբ վնասը առաջացնող հանգամանքների քննարկմանը մասնակցում են ոստիկանությունը, դատախազությունը կամ իրավապահ այլ մարմիններ, Ապահովադիրը պարտավոր է ներկայացնել քրեական գործի հարուցման կամ հարուցումը մերժելու վերաբերյալ որոշման պատճենը:

23.4. Ապահովադիրը պարտավոր է ներկայացնել կրած վնասների գումարների չափը հաստատող և հիմնավորող փաստաթղթեր, որոնց հիման վրա կկատարվի ապահովագրական հատուցման գումարի հաշվարկը՝ կախված ապահովագրական պատահարի բնույթից:
Այդպիսի փաստաթղթերի թվին են պատկանում ՝
ա) վնասված, ոչնչացված կամ կորած գույքի ցուցակը և/կամ գույքագրման գրքերը,
բ) ապահովագրական պատահարի վրա հասնելու պահին վնասված, ոչնչացված կամ կորած գույքի արժեքը հաստատող փաստաթղթերը,
գ) գույքի գույքագրման ակտերը, որոնք կազմված են գույքի վնասման (ոչնչացման) փաստի վերաբերյալ՝ ապահովագրական պատահարը վրա հասնելու ամսաթվին մոտ ամսաթվով,
դ) ապրանքային պահուստների (մուտքի և բեռնաթափման) հաշվառման վերաբերյալ, պատրաստի արտադրանքի (հումքի, նյութերի, իրացման ենթակա ապրանքների կամ կիսաֆաբրիկատների) վերաբերյալ փաստաթղթերը, այդ թվում՝ հաշվապահական:

23.5.Վնասի չափը հաստատող փաստաթղթեր՝
ա) ֆինանսական փաստաթուղթ (հաշիվ-ապրանքագիր, հաշիվ-տեղեկանք) և/կամ տեղեկանք՝ տրված օրենսդրությամբ սահմանված կարգով նման գույքը վերանորոգելու իրավունք ունեցող և նման գործունեություն իրականացնող անձի կամ կազմակերպության կողմից կամ
բ) եզրակացություն կամ ակտ կամ հաշվետվություն՝ տրված անկախ փորձագետի կողմից,
գ) եթե ապահովագրական պատահարի հետևանքով վնասված/կորած գույքը կամ դրա որոշ մասերը/բաղադրամասերը, համաձայն սույն Պայմանների, անհրաժեշտ է փոխարինել, ապա անհրաժեշտ է ներկայացնել փաստաթուղթ (հաշիվ-ապրանքագիր, հաշիվ-տեղեկանք) և/կամ տեղեկանք՝ տրված նման գույք կամ մաս/բաղադրամաս վաճառող կազմակերպության կողմից,
23.5.1. եթե Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ ծախսն իրականացվել է Ապահովադրի կողմից ինքնուրույն, ապա անհրաժեշտ է ներկայացնել կատարված ծախսը հիմնավորող հետևյալ ֆինանսական փաստաթղթերը.
ա) պայմանագիր և/կամ հաշիվ-ապրանքագիր և
բ) դրամարկղի մուտքի օրդերի կտրոն՝ կանխիկ վճարման դեպքում կամ
գ) բանկի վճարման հանձնարարագիր՝ փոխանցումով վճարելու դեպքում:
23.5.2. Ապահովադրի կամ Շահառուի բանկային տվյալները՝ հատուցումը փոխանցումով ստանալու դեպքում:
23.5.3. Այլ և կամ լրացուցիչ փաստաթղթեր, որոնց ներկայացման անհրաժեշտության որոշումն ընդունում է Ապահովագրողը՝ կախված ապահովագրական պատահարի բնույթից և վնասի չափից:
23.6. Նշված փաստաթղթերով ներկայացված վնասի չափը Ապահովագրողի համար կրում է տեղեկատվական բնույթ, և եթե Ապահովագրողը համաձայն չէ նշված վնասի չափի հետ, կամ եթե Ապահովադիրը ի վիճակի չէ ներկայացնել վնասի չափը հիմնավորող փաստաթուղթ, ապա Ապահովագրողն իրավունք ունի դիմելու անկախ փորձագետի ծառայությանը վնասի չափը և/կամ պատճառները պարզելու նպատակով: Նշված ծառայության ծախսերը իրականացվում են Ապահովագրողի հաշվին:
23.7. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է պատահարի վերաբերյալ Պայմաններով սահմանված փաստաթղթերը ներկայացնել Ապահովագրողին գրավոր դիմում ներկայացնելու օրվանից 2 (երկու) ամսվա ընթացքում:
23.8. Նշված ժամկետում Ապահովադրի (Շահառուի) կողմից Պայմաններով սահմանված փաստաթղթերը չներկայացնելու կամ սահմանված երկու ամսյա ժամկետը երկարաձգելու մասին գրավոր որևէ միջնորդություն չներկայացնելու դեպքում Ապահովագրողը, Պայմանների համաձայն, Ապահովադրի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով կարող է մերժել ապահովագրական հատուցման վճարումը, սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո հնգօրյա ժամկետում:
23.9. Այն դեպքում, երբ Ապահովադիրը գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ հիմնավոր պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, ապա Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև վեց ամիս ժամկետով: Նշված ժամկետում Ապահովադրի կողմից սահմանված պարտավորության չկատարման հետևանքները նույնանում են 23.8. կետում սահմանված դրույթների հետ:
23.10. Սույն գլխի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Ապահովագրողը իրավունք ունի մերժելու ապահովագրական հատուցումը:

24. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

24.1. Ապահովագրական հատուցման չափը չի կարող գերազանցել ապահովագրական պատահարի արդյունքում կրած վնասների չափը: Ապահովագրական հատուցման չափը չի կարող գերազանցել

նաև ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի չափը: Ապահովագրված գույքի առանձին միավորների գծով, որոնց համար Պայմանագրով սահմանված է ապահովագրական գումար կամ ապահովագրական գումարի ենթալիմիտ, ապահովագրական հատուցումը սահմանափակվում է տվյալ ապահովագրական գումարի կամ ապահովագրական գումարի ենթալիմիտի մեծությամբ:

24.2. Ապահովագրված գույքի մասնակի վնասման դեպքում ենթակա են հատուցման այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են գույքի՝ ապահովագրական պատահարից անմիջապես առաջ եղած վիճակը վերականգնելու համար (վերականգնողական ծախսեր):

24.3. Պայմանների շրջանակում վերականգնողական ծախսեր ասելով հասկացվում են՝

ա) վերանորոգման համար անհրաժեշտ պահեստամասերի և նյութերի գնման ծախսերը,

բ) վերանորոգման վայր պահեստամասերի և նյութերի տեղափոխման ծախսերը,

գ) վերանորոգման աշխատանքների վճարման ծախսերը:

Ընդ որում, վերականգնողական ծախսերը պետք է նվազեցվեն ապահովագրական պատահարը տեղի ունենալու պահին վնասված գույքի մաշվածության չափով:

24.4. Վնասված գույքի վերականգնման կամ վերանորոգման ծախսերի (վերականգնողական ծախսեր) հաշվարկման ժամանակ կիրառվում են հետևյալ կանոնները՝

ա) վնասված գույքի վերականգնման (վերանորոգման) համար պետք է կիրառվեն ըստ տեսակի և որակի նույնատեսակ նյութեր և պահեստամասեր, ինչպիսիք օգտագործվել են վնասված գույքի համար , կամ այլ նյութեր և պահեստամասեր, որոնք դրանց հետ նույնատեսակ են արժեքով,

բ) շենքի և շինության վերանորոգման իրականացման համար օգտագործված նյութերի ծախսերը հատուցվում են վնասված շենքի (շինության) կոնստրուկտիվ տարրերի ապամոնտաժման արդյունքում մնացած, հետագա օգտագործման համար պիտանի նյութերի (պիտանի մնացորդներ) արժեքների պակասեցմամբ,

գ) վերանորոգման աշխատանքների վճարման ծախսերը հատուցվում են ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահին վերանորոգման աշխատանքների իրականացման վայրում նմանատիպ աշխատանքների գործող միջին սակագներով, իսկ Ապահովադրի ուժերով վերանորոգման իրականացման դեպքում՝ վերանորոգման ինքնարժեքով կամ ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահին վերանորոգման աշխատանքների իրականացման վայրում նմանատիպ աշխատանքների միջին սակագներով՝ կախված այն բանից, թե այդ գումարներից որը կլինի ավելի փոքր,

դ) հաշվարկներում ներառվում են միայն այն աշխատանքների իրականացման ծախսերը, որոնք անհրաժեշտ են ապահովագրական պատահարի հետևանքների վերացման համար:

24.5. Չեն հատուցվում լրացուցիչ այն ծախսերը, որոնք կապված են աշխատանքների կատարման հրատապության, ապահովագրված գույքի կատարելագործման կամ նախագծի (կառուցվածքի) փոփոխության, պլանային վերանորոգման իրականացման հետ:

24.6. Վնասված գույքի նախնական վերանորոգման ծախսերը հատուցվում են միայն այն դեպքում, երբ նախնական վերանորոգումը հանդիսանում է վերջնական վերանորոգման մի մասը, և եթե նախնական վերանորոգմամբ չեն մեծանա վերանորոգման ընդհանուր ծախսերը:

24.7. Եթե ապահովագրական պատահարի հետևանքով շենքի կամ շինության վնասված կառուցվածքային տարրերը պետք է քանդվեն, և չվնասված կառուցվածքային տարրերը (օրինակ՝ ծածկեր, կտուրներ և այլն)՝ նորից հավաքվեն, ապա այդ աշխատանքների կատարման ծախսերի գումարը ներառվում է վերանորոգման ծախսերի մեջ:

24.8. Եթե շենքի կամ շինության առանձին կառուցվածքային մասերի համար անհրաժեշտ է անցկացնել դրանց ժամանակավոր ամրացում (հենարանի սարքավորումներ, ձգանակ և այլն), այդ աշխատանքների կատարման ծախսերի և դրանց իրականացման համար անհրաժեշտ նյութերի ծախսերի գումարը ներառվում է վերանորոգման ծախսերի մեջ:

24.9. Լրացուցիչ ծախսերը, կապված լրացուցիչ աշխատանքների վճարման հետ, ինչպես նաև նյութերի, պահեստամասերի կամ մեքենաների էքսպրես-առաքումով կամ օդային տրանսպորտով փոխադրումը չի հատուցվում:

24.10. Ապահովագրված գույքի ամբողջական կորստի դեպքում ապահովագրական հատուցումը հաշվարկվում է ապահովագրական պատահարը վրա հասնելու պահին գույքի իրական արժեքի չափով՝ հանելով այն մնացորդների արժեքը, որոնք կարող են վաճառվել կամ օգտագործվել գործնական նպատակներով (անհրաժեշտ մնացորդներ): Ապահովադիրը իրավասու չէ հրաժարվել այդպիսի մնացորդներից:

Պայմաններով ամբողջական կորուստ ասելով՝ հասկացվում է ապահովագրված գույքի կորուստը, վնասումը կամ ոչնչացումը,՝դրա վերականգնման տեխնիկական անհնարինությամբ կամ դրա այնպիսի վիճակը, երբ վերականգնման և/կամ վերանորոգման համար անհրաժեշտ ծախսերը գերազանցում են ապահովագրական պատահարը վրա հասնելու պահին գործող գույքի իրական արժեքը:

24.11. Փրկված գույքի (օգտագործման ենթակա ապրանքների) արժեքը որոշվում է տվյալ տարածքում այդ մնացորդների վաճառքի գնի հիման վրա:
24.12. Մաշվածության աստիճանը հաշվարկվում է փորձագիտական գնահատականի հիման վրա: Եթե ապահովագրական գումարը սահմանվել է հաշվեկշռային արժեքին համապատասխան, ապա գույքային միավորի մաշվածության մակարդակը համարվում է հավասար հաշվապահական հաշվառման տվյալներով կուտակված մաշվածության մակարդակին:
24.13. Եթե ապահովագրական գումարը հաստատված է արտարժույթով արտահայտված գումարի դրամային համարժեքով, ապա ապահովագրական հատուցման վճարման չափը հաշվարկվում է՝ ելնելով ապահովագրական պատահարի վրա հասնելու օրը տվյալ արտարժույթի նկատմամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքից:
24.14. Եթե Ապահովադրին հասցված վնասները հատուցել են երրորդ անձիք, ապա Ապահովագրողը վճարում է միայն Պայմանագրի համաձայն հատուցման ենթակա գումարի և երրորդ անձանցից ստացված գումարի տարբերությունը: Այդպիսի գումարներ ստանալու դեպքում Ապահովադիրը պարտավոր է դրանց մասին անմիջապես տեղյակ պահել Ապահովագրողին:
24.15. Այն դեպքում, երբ Ապահովադրին և/կամ Շահառուին հայտնի է դառնում հափշտակված գույքի գտնվելու վայրը, նա պարտավոր է անհապաղ հայտնել այդ մասին Ապահովագրողին:
24.16. Եթե հափշտակված գույքը՝
ա) վերադարձվում է Ապահովադրին անվնաս վիճակում մինչև ապահովագրական հատուցման վճարումը, ապա ապահովագրական հատուցում չի վճարվում,
բ) վերադարձվում է Ապահովադրին անվնաս վիճակում ապահովագրական հատուցումը ստանալուց հետո, ապա Ապահովադիրը պարտավոր է վերադարձնել Ապահովագրողին վճարված հատուցման գումարն ամբողջությամբ: Վերադարձման ժամկետները որոշվում են Կողմերի համաձայնությամբ,
գ) վերադարձվում է Ապահովադրին վնասված վիճակում, ապա Ապահովագրողը վճարում է հատուցում համաձայն սույն Գլխի:
24.17. Գույքը փրկելու պարտականությունները կատարելու հետ կապված ծախսերը հատուցվում են Ապահովագրողի կողմից, եթե այդ ծախսերի հատուցումը նշված է Վկայագրում: Նշված ծախսերը հատուցվում են ապահովագրական արժեքի նկատմամբ ապահովագրական գումարին համամասնական չափով, սակայն ոչ ավել, քան ապահովագրական գումարի 20 (քսան) տոկոսը:
24.18. Ապահովագրողն ազատվում է այն ծախսերի հատուցումից, որոնք առաջացել են Ապահովադրի կողմից հնարավոր կորուստները նվազեցնելու խելամիտ և հասանելի միջոցները դիտավորյալ չկիրառելու արդյունքում:
24.19. Ապահովագրական հատուցումը վճարվում է այն անձին (Շահառուին), ում օգտին կնքվել է Վկայագիրը:
24.20. Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցումը մերժելու հիմք են հանդիսանում՝
ա) Ապահովադրի, նրա ներկայացուցչի կամ Շահառուի կողմից պատահարի առաջացմանն ուղղված կանխամտածված անօրինական գործունեությունը, որն այդպիսին է որակվում դատարանի կամ քննչական մարմինների փաստաթղթերի համաձայն,
բ) Ապահովադրի կողմից ապահովագրության օբյեկտի վերաբերյալ դիտավորյալ ոչ հավաստի տեղեկություններ ներկայացնելը, բացառությամբ այն դեպքերի, որոնք էական նշանակություն չեն ունեցել ապահովագրական ռիսկի գնահատման համար,
գ) օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքեր:
24.21. Ապահովագրողը կարող է իր հայեցողությամբ ընտրել գույքը վերականգնելու, վերանորոգելու կամ փոխարինելու տարբերակը կամ կարող է հատուցել կորստի, վնասի արժեքը դրամական տեսքով: Ապահովագրողի կողմից որևէ կորստի կամ վնասի հատուցման պահանջի դեպքում վճարման ենթակա գումարը պետք է հիմնված լինի տվյալ կորստի կամ վնասի ժամանակ ՀՀ-ում տվյալ տեսակի գույքի շուկայական արժեքի վրա:
24.22. Ապահովագրական հատուցման վճարման մերժումը կարող է բողոքարկվել դատական կարգով:
24.23. Ապահովագրական հատուցման վճարումը կարող է հետաձգվել, եթե Ապահովադրի, նրա ներկայացուցչի կամ Շահառուի նկատմամբ հարուցվել է քրեական գործ՝ կապված պատահարի առաջացման հետ, ինչպես նաև օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում:
24.24. Ապահովագրողը պարտավոր է՝
ա) Պայմաններով նշված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ընդունել ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու (մերժման դեպքում նշելով դրա պատճառները) մասին եզրակացություն (որոշում): Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը պատշաճ կերպով՝ Ապահովադրին (Շահառուին) անձամբ հանձնելու միջոցով կամ Ապահովադրի (Շահառուի)՝ Վկայագրում նշված հասցեով փոստային առաքմամբ, տրամադրում է Ապահովադրին (Շահառուին): Ապահովագրական հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողի

կայացրած պատճառաբանված որոշումը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքվում է Ապահովադրին (Շահառուին)՝ նրա մշտական բնակության հասցեով,
բ) Հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում միանվագ վճարել ապահովագրական հատուցումը:
24.25 Ապահովագրողն իրավասու է հետաձգել ապահովագրական հատուցման վճարումը այն դեպքում, եթե՝
ա) կան հիմնավորված կասկածներ Ապահովադրի՝ ապահովագրական հատուցումը ստանալու իրավասության վերաբերյալ: Այդ դեպքում ապահովագրական հատուցումը չի վճարվում այնքան ժամանակ, քանի դեռ չեն ներկայացվել անհրաժեշտ ապացույցներ (այդպիսի ապացույցներ են հանդիսանում Պայմանների 23 գլխում նշված փաստաթղթերը),
բ) ապահովագրական պատահարի փաստի վերաբերյալ Ոստիկանության կողմից քրեական գործ է հարուցված Ապահովադրի ղեկավար աշխատակիցների (հենց Ապահովադրի կամ նրա հարազատների, եթե Ապահովադիրը հանդիսանում է ֆիզիկական անձ) նկատմամբ՝ մինչև քրեական հետաքննության ավարտը:
24.26. Ապահովագրական հատուցման վճարման օր է համարվում Ապահովագրողի հաշվարկային հաշվից կամ դրամարկղից դրամական միջոցների դուրսգրման ամսաթիվը:
24.27. Ապահովադրին (Շահառուին) ապահովագրական հատուցում վճարելու դեպքում ապահովագրական գումարը ինքնաշխատ կերպով նվազում է վճարված հատուցման չափով: Ապահովագրական գումարը համարվում է նվազեցված Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցում վճարելու պահից: Ապահովագրական հատուցում ստանալուց հետո Ապահովադիրն իրավունք ունի լրացուցիչ ապահովագրավճարի դիմաց վերականգնել նախնական ապահովագրական գումարը:
24.28. Ապահովագրական հատուցման մերժման դեպքում եզրակացության մեջ պետք է նշվեն մերժման պատճառները:

25.ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ, ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

25.1. Ապահովագրողը կամ նրա կողմից լիազորված անձը կարող են կազմել վթարային հավաստագիր: Այդ նպատակով նրանք իրավունք ունեն ապահովագրական պատահարի հետ կապված լրացուցիչ տվյալներ հավաքագրել իրավապահ մարմիններից, պետական կառավարման մարմիններից կամ այլ անձանցից, որոնք տիրապետում են պատահարի առաջացման հանգամանքների մասին տեղեկատվությանը:
25.2. Ապահովագրողը պատահարի առաջացումից հետո իրավունք ունի դիմելու անկախ փորձագետների՝ ապահովագրական պատահարի պատճառները բացահայտելու և վնասի չափը ճշտելու համար, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելիս հիմնվելու վերջիններիս եզրակացությունների վրա:
25.3. Անհրաժեշտության դեպքում տեղի ունեցած պատահարի վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով Ապահովագրողը կարող է դիմել պետական մարմինների, կազմակերպությունների կամ այլ անձանց, ովքեր տիրապետում են ապահովագրական պատահարի վերաբերյալ տեղեկատվությանը:
25.4. Ապահովագրողն իրավունք ունի անձամբ հետաքննելու և պարզելու ապահովագրական պատահարի հանգամանքները և պատճառները:
25.5. Ապահովադիրը նույնպես իրավունք ունի նշանակել փորձագետ-սյուրվեյեր՝ վնասի ծագման պատճառները որոշելու և/կամ դրա չափերը գնահատելու համար:
25.6. Պայմանագրի կողմերից յուրաքանչյուրը կրում է իր կողմից նշանակված փորձագետի (սյուրվեյերի) ծառայությունների վճարման ծախսերը:

26. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՅԼ ԱՆՁԻՆ ՓՈԽԱՆՑԵԼԸ

26.1. Ապահովագրված գույքի նկատմամբ իրավունքներն այն անձից, ում օգտին կնքվել է Վկայագիրը, այլ անձի փոխանցման դեպքում այդ Վկայագրով իրավունքները և պարտականությունները անցնում են այն անձին, որին անցել են տվյալ գույքի նկատմամբ իրավունքները՝ 21.2.4. կետում նշված կարգով և ժամկետներում Ապահովագրողին ծանուցելու դեպքում:
26.2. Եթե փոխանցվում (վաճառվում) է ապահովագրված գույքի միայն մի մասը, որը ապահովագրության նպատակներով չի ստեղծում առանձին օբյեկտ, ապա Վկայագրով նախատեսված ապահովագրությունը չի տարածվում այդպիսի օբյեկտների վրա:
26.3. Եթե ապահովագրված օբյեկտների փոխանցման (վաճառքի) արդյունքում ապահովագրական պատահարի վրա հասնելու ռիսկն աճում է, ապա այդ դեպքում կիրառվում են ռիսկի մակարդակի աճի վերաբերյալ Պայմանների ընդհանուր դրույթները:

27. ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ

27.1. Ապահովագրական հատուցում վճարելուց հետո հատուցված գումարի սահմաններում Ապահովագրողին են անցնում Ապահովադրի (Շահառուի) պահանջի իրավունքը, որը նա ունի Ապահովագրողի կողմից հատուցված վնասի պատճառման համար պատասխանատու անձի նկատմամբ:

27.2. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին փոխանցել բոլոր փաստաթղթերը և ապացույցները, ինչպես նաև տրամադրել նրան բոլոր տվյալները, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողին փոխանցված վնասի պահանջի իրավունքն իրականացնելու համար:

27.3. Եթե Ապահովադիրը հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված կամ հատուցվելիք վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իր իրավունքից, կամ այդ իրավունքի իրականացումը անհնարին է դարձել Ապահովադրի (Շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան չափով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունից, իսկ ապահովագրական հատուցումը արդեն վճարված լինելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի պահանջել Ապահովադրից (Շահառուից) ետ վերադարձնելու ավելորդ վճարված ապահովագրական հատուցման գումարները:

28. ԾԱՆՈՒՑՈՒՄ

28.1. Բոլոր ծանուցումները, որոնք Ապահովադիրը պետք է իրականացնի Պայմաններին և/կամ Վկայագրի այլ պայմաններին համապատասխան, պետք է հաստատվեն գրավոր ձևով, եթե այդ ծանուցումները կատարվել են բանավոր, հեռախոսով, հեռագրով կամ այլ միջոցներով: Ծանուցման ամսաթիվ ասելով՝ հասկանում ենք այն ամսաթիվը, որով ստացվել է ծանուցումը:

28.2. Վկայագրի բովանդակությանը վերաբերող թողարկված Համաձայնագրերը վավերական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարվել են գրավոր ձևով:

29. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

29.1. Վկայագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Վկայագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Վկայագրով պարտավորությունների կատարումը:

29.2. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Վկայագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

29.3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Վկայագրով սահմանված պարտականությունների իրականացման վրա պարտավոր է ապացուցել այն Կողմը, որի պարտականությունների իրականացմանն է խոչնդոտում նման ազդեցությունը:

30. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

30.1. Վկայագրի գործողության ընթացքում առաջացող բոլոր վեճերը լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են համաձայն օրենսդրության:

30.2. Վկայագրի և Պայմանների միջև հակասությունների դեպքում Վկայագրի դրույթները գերակա են Պայմանների դրույթների նկատմամբ:

30.3. Վեճերի առաջացման դեպքում Պայմաններով չկարգավորված հարցերը կարգավորվում են օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: